Հավելված
Հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքի
ավագանու 05 մայիսի 2023թ.
թիվ 44 որոշմամբ
Փոփոխությունը հաստատված է
ՀՀ Արմավիրի մարզի Վաղարշապատի համայնքի
ավագանու 11 դեկտեմբերի 2023թ.
թիվ 100-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(2022-2026 թթ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ 2022-2026 ԹԹ. ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար _____ Դ.Գասպարյան

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 05.05.2023թ. թիվ 44 որոշմամբ
Փոփոխությունը հաստատվել է՝
համայնքի ավագանու 11.12.2023թ. թիվ 100-Լ որոշմամբ

Սիրելի՛ համաքաղաքացիներ,

Հայության հոգևոր մայրաքաղաք Էջմիածինը (Վաղարշապատը) յուրաքանչյուր հայի հպարտությունն է, մեր պատմության կենդանի վկան, մեզ ապրեցնող երազանքների կերպը: Մեր համայնքի շենացումն ու ծաղկեցումը յուրաքանչուրիս մասնաբաժին աշխատանքն է պահանջում: Ամենքիս գիտակցության մեջ պետք է լինի, որ մեր տեղում, մեր աշխատանքով ու հնարավորությունների ներածին չափով պարտավոր ենք շենացնել, հզորացնել և հետագա սերունդներին փոխանցել հազարամյակների պատմություն ու մշակույթ ունեցող, գրի, դպրության օրրան, Միածնաէջ մեր քաղաքը՝ կայուն ու հստակ տեսլականով, ինչպիսին պատմությունը շռայլորեն ընձեռել է մեզ:

Վաղարշապատում ծառացած խնդիրները բազմաթիվ են, որոնք շարունակական սրտացավ և գիտակից աշխատանք ու լուծումներ գտնելու ուղիներ են պահանջում: Բազմաթիվ ոլորտներում կան հիմնային ու համակարգային բարեփոխումների կարիքներ: Մինչ այս և այսուհետ ևս մեր որդեգրած գլխավոր սկզբունքը, աշխատանքի առանցքը շարունակելու է մնալ մեր համայնքի բնակիչը, նրա առօրյա և կենսական հարմարավետության ապահովումը:

Մեր մտածիրում առաջնահերթ նպատակ է Վաղարշապատը դարձնել հարմարավետ կենսամիջավայր՝ բնակվելու, աշխատելու, ապագա կառուցելու համար, իսկ հյուրերի համար՝ տպավորիչ բացահայտման ուղղություն: Այդ նպատակն իրականություն դարձնելու համար անհրաժեշտ է հիմնովին լուծել առաջնային խնդիրներն, որոնք այսօր ունի համայնքը:

Իհարկե, հրատապության և շահառու քաղաքացիների ընդգրկվածության առումով գլխավոր լուծման անհրաժեշտություն ունեն համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման խնդիրները, որոնք ճյուղավորվելով ծնունդ են տալիս հարակից խնդիրների: Անհրաժեշտ է նոր, ժամանակակից չափանիշներին համապատասխան աղբահանության և սանիտարական մաքրման համակարգի ներդրում: Այս պարագայում անհրաժեշտություն է կրթական և սոցիալական իրազեկման ակցիաների միջոցով աղբի տեսակավորման մշակույթի ձևավորումը ևս:

Որպես զարգացող եւ ապագայի համայնք դառնալու մարտահրավեր ունեցող բնակավայր, հսկայական կարևորություն ունեցող հիմնախնդիր է կանաչ գոտիների, այգիների ավելացումը, մյուսների շարունակական բարեկարգումն ու արդիականացումը: Կբացառվեն հանրային շահի ոտնահարմամբ կանաչ տարածքների հաշվին կառուցապատման աշխատանքները: Կշարունակվեն կանաչ գոտիների, այգիների լուսավորման էներգախնայողության համակարգի անցկացման աշխատանքները:

Վաղարշապատ համայնքի առջև ծառացած լրջագույն խնդիրներից է խորհրդային տարիներին կառուցված բազմաբնակարան շենքերի հնամաշությունը, սեյսմակայուն վիճակը, դրանց արտաքին տեսքի անհրապուրությունը, հատկապես կենտրոնական փողոցներում, ինչը անդրադառնում է նաեւ մի շարք այլ ոլորտնի վրա, դրանց մուտքերի և տանիքների անմխիթար վիճակը: Այս հիմնախնդրի լուծման ուղիներից մեկը համայնքապետարան-բնակիչներ կապի ամրապնդումն ու փոխգործակցության սերտացումն է, ինչը հնարավորություն կտա համատեղ ջանքով հասնել խնդրի լուծման: Բազմաբնակարան շենքերի կենսամիջավայրի բարելավման լրջագույն գործոն է նաեւ հարակից բակային տարածքների խնամվածությունը, մաքրությունը, դրանց կանաչապատումն ու կահավորումը՝ խաղային և մարզական հրապարակներով:

Քաղաքաշինության ոլորտում միասնական մոտեցման ձևավորման և ոլորտի կանոնակարգման նպատակով մասնագիտական և հանրային քննարկումների միջոցով հրատապ անհրաժեշտություն է՝ մշակել քաղաքային զարգացման քաղաքաշինական ռազմավարություն, քաղաքաշինական ծրագրերի և դրանց առաջնահերթությունների վերաբերյալ իրականացնել հանրային լայն քննարկումներ:

Կրթության ոլորտում մայր նպատակ է նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների վերջնական բարելավումը, որպեսզի համայնքում չլինի վատ շենքային պայմաններում գործող նախակրթարան:

Կրթական համակարգի որակի շարունակաբար բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը ևս մեր դիտակետում է:

Հոգևոր մայրաքաղաքի զբոսաշրջային գրավչության բարձրացման նպատակով ծրագրեր կիրականացվեն զբոսաշրջության ենթակառուցվածնքերի զարգացման ուղղությամբ, Վաղարշապատի՝ հոգոր ուղղություն լինելուց անդին զբոսաշրջային ինքնության ստեղծման համար քայլեր ևս ձեռնարկվելու են: Մեր գործունեության կարևոր ուղղություններից է լինելու տնտեսական ներդրումների և գործարարության համար բարենպաստ միջավայրի ապահովումը, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանումը, համայնք - մասնավոր հատված համագործակցության ընդլայնումը քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում՝ նպատակ ունենալով վերջինիս միջոցով ոլորտում ապահովել անհրաժեշտ ներդրումներ, բարձրացնել տվյալ ոլորտներում կառավարման արդյունավետությունը: Համայնքային տնտեսության կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով ոլորտային ենթակառուցվածքային ծրագրերի իրականացման ընթացքում խթանելու ենք ապագայանպաստ գաղափարները, նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը: Մենք հավատում ենք, որ մեր միասնական և վստահ քայլերով, համախմբվածությամբ, մեր համայնքի նկատմամբ աներեր սիրով, սրտացավ և հոգատար վերաբերմունքով ու բարձր պատասխանատվությամբ, ազնիվ աշխատանքի ու նվիրումի շնորհիվ կարող ենք շենացնել մեր տունը, մեր Էջմիածինն ու Ոսկեհատը և մեր Հայրենիքը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԻԱՆԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 2. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ 2022-2026ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ 2022-2026ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՏՐԱՆՍՊՈՐՏ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒՅԹ

ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ԽԵԼԱՑԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԳԼՈՒԽ 4. ՈՍԿԵՀԱՏ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունած «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն (ՀՕ 328-Ն)՝ համայնքների միավորման արդյունքում ձևավորվեց Վաղարշապատ բազմաբնակավայր համայնքը: Ըստ այդմ, ներկայումս Վաղարշապատ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են Էջմիածինը և Ոսկեհատը:

Էջմիածինը (Վաղարշապատ) Հայաստանի պատմական կարևորագույն քաղաքներից մեկն է:

2-րդ դարի առաջին կեսին, ըստ Մովսես Խորենացու, Սանատրուկ Բ-ի որդի Վաղարշ Ա թագավորը Վարդգեսավանը պատում է պարսպով ու մեծ պատվարով, դարձնում թագավորանիստ քաղաք՝ վերանվանելով այն Վաղարշապատ կամ Նոր Քաղաք, Վաղարշ Ա Արշակունու ժամանակից (մ. թ. 191-211 թվականներ): Միջին դարերում, մասնավորապես միջնադարում, Վաղարշապատը մերթընդմերթ կոչվել է նաև Էջմիածին:

1945 թվականին քաղաքը վերանվանվել է Էջմիածին և այդ անուն է կրել մինչև 1992 թվականը, երբ նորից վերանվանվեց Վաղարշապատ:

Վաղարշապատի դերի բարձրացումը առաջնակարգ մայրաքաղաքի աստիճանի հետևանքն էր այն բանի, որ 301 թվականից այն դարձավ քրիստոնեական Հայաստանի հոգևոր կենտրոնը, նաև կաթողիկոսանիստ բնակավայրը: Այստեղ է բացվել Մաշտոցյան առաջին դպրոցը, այստեղ է հաստատվել առաջին հայկական պետական-պաշտոնական մատենադարանը, առաջին հոգևոր ուսումնական հաստատությունը:

Քաղաքը գտնվում է Արմավիրի մարզում, մակերեսը կազմում է 40 կմ², բնակչությունը՝ 60.518 մարդ:

Կաթողիկոսանիստ քաղաք լինելու պատիվը, այստեղ կառուցված եկեղեցիներն ու պատմամշակութային կետերը քաղաքը դարձնում են Հայաստանի գլխավոր զբոսաշրջային խաչմերուկներից մեկը: Եկեղեցիներից զատ գլխավոր ուղղություն համարվում են բազմաբնույթ թանգարանները; Այստեղ են տեղակայված Վաղարշապատի պատմազգագրական թանգարանը, «Զվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանը, Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարանը, Խորեն Տեր-Հարությանի թանգարանը եւ Կաթողիկոսարանում՝ Մայր տաճարի թանգարանը, Ռուբեն Սևակ թանգարանը, Ալեք և Մարի Մանուկյան գանձատունը, Հին վեհարանը:

ՈՍԿԵՀԱՏ. Գտնվում է Հայաստանի Արմավիրի մարզում, Վաղարշապատի տարածաշրջանում: Ոսկեհատ է վերանվանվել 1978 թվականին: Այստեղ է գտնվում գյուղատնտեսական ակադեմիայի ուսումնական տնտեսությունը: Գյուղը տեղադրված է Միջինարաքսյան հարթավայրում, ծովի մակարդակից ունի 940 մ բարձրություն: Գյուղի բնակչության մեծ մասը հայրենադարձներ են, ինչպես նաև Հայաստանի տարբեր շրջաններից տեղափոխվածներ: Բնակչությունը կազմում է 2897 մարդ (2022 թվականի տվյալներով): Գյուղն ունի 753 առկա տնտեսություն: Ունի դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (433 հա), կան պտղատու (3 հա) և խաղողի այգիներ (15 հա): Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, բազմամյա տնկարկներ՝ կազմելով համապատասխանաբար 111, 17.9, 18.1 հեկտար: Զբաղվում են պտղաբուծությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, թռչնաբուծությամբ, անասնապահությամբ:

ԳԼՈՒԽ 2.ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ /ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ/

1. Վաղարշապատ համայնքի հաստատուն զարգացման ու առաջընթացի ապահովումը՝ համայնքապետարանի գործունեության արդյունավետության բարձրացման, աշխատանքի թափանցիկության եւ հաշվետվողականության ապահովմամբ և բնակիչներին լիարժեք հաշվետու լինելու միջոցով:

2. Աղբահանության ժամանակակից համակարգի ստեղծում նոր աղբամանների և աղբատար մեքենաների ներդրմամբ:

3. Ներհամայնքային հասարակական տրանսպորտի համակարգի ներդրում, կանգառների թարմացում և նոր կանգառների կառուցում:

4. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանում, Վաղարշապատ համայնքի զբոսաշրջային ինքնության ստեղծում:

5. Նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների վերջնական բարեկարգում և ներառականության հնարավորությունների ապահովում:

6. Վաղարշապատ համայնքում կրթական համակարգի՝ նախադպրոցական և արտադպրոցական կրթության որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացում: Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում:

7. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով երիտասարդների շրջանում սպորտի և առողջ ապրելակերպի գաղափարի խթանում:

8. «Խելացի քաղաք» ծրագրի ներդրում և ծառայությունների որակի բարելավում:

9. Էջմիածին քաղաքի և քույր քաղաքների միջև գործնական կապերի ամրապնդում, ընդլայնում, Վաղարշապատ համայնքի՝ միջազգային ծրագրերին և միություններին մասնակցության ապահովում:

10. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացում, էներգախնայող համակարգերի թվի ավելացում, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացում:

11. Շենքերի և բակային տարածքների բարեկարգում:

12. Բնակելի ֆոնդի վերանորոգում և պահպանում, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի բարելավման շարունակականության ապահովում:

13. Հանգստի գոտիների ստեղծում, կանաչապատման աշխատանքների շարունակական իրականացում:

14.Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանում:

15. Ջրահեռացման համակարգի անցկացում, ասֆալտապատում համայնքի այն հատվածներում, որտեղ տարիներ ի վեր առկա են կենսագոյության համար առաջնային այս խնդիրները:

16.Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովում և այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի իրագործում:

17 . Ոսկեհատ վարչական շրջանի բնակիչների բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով կիրականացվեն հանգստյան գոտիների, բակային տարածքների, միջբակային տարածքների հետևողական մաքրման և նորգման աշխատանքներ:

18. Ոսկեհատի բակային տարածքներում և փողոցներում կիրականացվեն ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ:

19. Կընդլայնվեն կանաչ տարածքները, կտնկվեն նոր ծառեր:

20. Վարչական շրջանի կանաչ տարածքների մշտական, ոռոգման նպատակով կիրականացվեն ոռոգման ցանցերի նորոգման աշխատանքներ:

21.Կմշակվի Էջմիածին և Ոսկեհատ բնակավայրերի համահունչ և միաժամանակյա զարգացման և առաջխաղացման ռազմավարություն:

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Էջմիածին

Էջմիածին քաղաքի բյուջեով 2021թ. նախատեսվել են եկամուտներ 2173502.1 հազ. դրամ, նույն թվում դոտացիա հանրապետական բյուջեից 783962.9 հազ. դրամ:

Բյուջեի եկամուտների փաստացի մուտքը կազմել է 2329659.9 հազ. Դրամ (107.2%), այդ թվում վարչական բյուջեի սեփական եկամուտներ՝ 118.5%: Տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 297433.9 հազ. դրամ:

Էջմիածին քաղաքի բյուջեի 2021թ. տարեկան եկամուտների պլան-կատարողականը, ինչպես նաև 2020թ. տարեկան փաստացի կատարողականը ունի հետևյալ տեսքը.

հազ. դրամ

Հ/Հ	ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	2021թ. Պլան տարեկան	2021թ. Կատարող.	2021թ. Կատ.%	2020թ. կատ.	2021/2020 նկատմ.
1	**Հարկային եկամուտներ ընդամենը, որից՝**	**420000,0**	**527105,5**	**125,5%**	**489450,1**	**107,7%**
7-1	Գույքահարկ շինություններից	100000,0	111476,0	111,5%	99503,5	112,0%
7-2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	250000,0	370984,4	148,4%	306947,6	120,9%

9-1	Հողի հարկ	70000,0	44645,1	63,8%	82999,0	53,8%
16	**Պետական տուրքեր ընդամենը, որից՝**	**28000,0**	**37925,5**	**135,4%**	**23707,8**	**160,0%**
16-90	Պետ. տուրք ՔԿԱԳ բաժնից	8000,0	13538,1	169,2%	7612,4	177,8%
16-91	Պետ. տուրք նոտարական գրասենյակից	20000,0	24387,4	121,9%	16095,4	151,5%
45	**Տեղական տուրքեր ընդամենը**	**40476,5**	**67368,9**	**166,4%**	**56118,7**	**120,0%**
45	Օբյեկտները քանդելու աշխ. սկսելու թույլ. համար	180,0	80,6	44,8%	256,4	31,4%
45-5	Օբյեկ. վերակ. արդիակ. տեսքը փոխելու վճար	15,0	5,0	33,3%	15,0	33,3%
45-6	Հիմնական և ոչ հիմնական շին. ներսում ոգելից խմ. վաճ. Համար	8724,0	11042,2	126,6%	9875,0	111,8%
45-8	Հիմնական և ոչ հիմնականշին. ներսում ծխախոտի վաճ. Համար	8370,0	9065,1	108,3%	8650,4	104,8%
45-10	Գազի բացօթյա վաճառքի թույլտվություն	4600,0	4830,0	105,0%	5541,7	87,2%
45-11	Վառելիքաքսայուղերի վաճառքի թույլտվ.	1260,0	4299,4	341,2%	4020,0	107,0%
45-13	Այլ ապրանքների բացօթյա վաճ. թույլտվություն	1990,0	3708,4	186,4%		
45-16	Հանրային սննդի կազմակերպ. թույլտվություն 24:00-ից հետո	2216,0	5623,5	253,8%	4137,3	135,9%
45-21	Այլ արտաքին գովազդ	8460,0	19729,2	233,2%	15460,8	127,6%
45-22	Համայնքի արխիվից պատճ. կրկն. Համար	100,0	90,2	90,2%	69,0	130,7%
45-23	Մարդատար տաքսու ծառ. թույլտվ. Համար	502,5	591,0	117,6%	358,5	164,9%
45-32	Հիմնական շինությունների շինարարութ. թույլտվության համար	1470,0	3383,3	230,2%	2020,0	167,5%
45-35	1001 և ավելի օբյեկտների համար	1639,0	3853,0	235,1%	3976,0	96,9%
45-45	Թանկարժեք մետաղների առուվաճառքի թույլտվ. Համար	950,0	1068,0	112,4%	1738,6	61,4%
4	**Ոչ հարկային եկամուտներ, որից՝**	373816,5	389220,8	104,1%	259231,5	150,1%
22-50	Գյուղ. նշան. հողերի վարձավճար	1500,0	1032,2	68,8%	1202,6	85,8%
22-52	Ոչ գյուղ. նշան. հողերի վարձավճար	25000,0	28741,2	115,0%	29971,4	95,9%
22-54	Գույքի վարձակալության վճար	3000,0	8499,8	283,3%	2914,0	291,7%
46	Տեղական վճարներ ընդամենը	325710,5	317229,2	97,4%	186496,2	170,1%
	ա/ բնակ. սպասարկման և աղբի վարձ բնակչությունից	117240,0	134101,8	114,4%	107960,4	124,2%
	բ/ աղբահանության վարձ հիմնարկներից	31356,0	31362,7	100,0%	30793,0	101,9%
	գ/ այլ տեղական վճարներ	2315,0	6398,6	276,4%	4002,0	159,9%
	դ/ մանկապարտեզի ծնող. Միջոց	109032,0	80179,3	73,5%	26689,2	300,4%
	ե/ երաժշտ. և գեղ. դպրոցների ուս. Վարձ	27767,5	27413,8	98,7%	17051,6	160,8%
	զ/ մարզադպրոց	38000,0	37773,0	99,4%		
28-60	Ինքնակամ շինությունների օրինականացման վճար	12000,0	20231,9	168,6%	20841,3	97,1%
24-50	Վարչական իրավախախտ. դիմաց կիրառ. տույժ. մուտ.	3606,0	4296,7	119,2%	4030,7	106,6%
28-50	Այլ ոչ հարկային եկամուտներ, որից՝	3000,0	9189,8	306,3%	13775,3	66,7%
	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	**862293,0**	**1021620,7**	**118,5%**	**828508,1**	**123,3%**
37-1	Դոտացիա	783962,9	783962,9	100,0%	608278,0	128,9%

37-3	Սուբվենցիա	2288,6	2288,6	100,0%	4900,8	46,7%
37-4	Այլ դոտացիա				87353,5	0,0%
37-5	Այլընտրանքային դրամաշնորհներ	1890,0	1890,0	100,0%	2250,0	84,0%
47-1	Պատվիրակված լիազ. իրակ. Համար	7227,3	7227,3	100,0%	7473,3	96,7%
37-8	Միջազգային կազմակերպություններից մուտքեր					
	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	**1657661,8**	**1816989,5**	**109,6%**	**1538763,7**	**118,1%**
29-50	Հողի օտարումից մուտքեր	210000,0	203189,6	96,8%	144741,2	140,4%
29-51	Այլ հիմնական միջոցների օտարումից մուտքեր	11000,0	21528,9	195,7%	17161,2	125,5%
38-4	Միջազգային կազմակերպություններից մուտքեր					
38-1	Պաշտոնական կապիտալ տրանսֆերտներ	294840,3	287951,9	97,7%	2648,7	10871,4%
49-1	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող մասհանում	97377,4	97377,4	100,0%	136529,8	71,3%
	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	**515840,3**	**512670,4**	**99,4%**	**164551,1**	**311,6%**
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**2173502,1**	**2329659,9**	**107,2%**	**1703314,8**	**136,8%**
	Ն/Թ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**1083293,0**	**1246339,2**	**115,1%**	**990410,5**	**125,8%**

Էջմիածին քաղաքի բյուջեի 2021թ. սեփական եկամուտների գծով նախատեսված 1083293.0 հազ. դրամի դիմաց մուտք է եղել 1246339.2 հազ դրամ (115.1%):

2021թ. Էջմիածին քաղաքի բյուջեից ծախս է կատարվել 2192418.0 հազ. դրամ:

Ըստ բնագավառների կատարվել են ծախսեր.

1. Քաղաքապետարանի պահպանման ծախսեր 231365.2 հազ. դրամ
2. Կրթության համակարգի ծախսեր- 360150.0 հազ. դրամ
3. Սպորտի համակարգի ծախսեր- 108801.0 հազ. դրամ
4. Մշակույթի համակարգի ծախսեր- 216189.7 հազ. դրամ
5. Բարեկարգման ծախսեր- 294256.4 հազ. դրամ
6. Բնակ. կոմունալ վարչության ծախսեր- 48745.6 հազ. դրամ
7. Սան. մաքրում և աղբահանություն- 264262.3 հազ. դրամ
8. Սոցիալական ֆոնդի ծախսեր- 23437.5 հազ. դրամ
9. Համաքաղաքային միջոցառումների ծախսեր- 11573.5 հազ. դրամ
10. Անասնաբուժական ծառայություն- 990.0 հազ. դրամ
11. Պատվիրակված լիազորությունների ծախսեր- 7097.3 հազ. դրամ
12. Ֆոնդային բյուջեի միջոցներից ծախսվել է- 625549.5 հազ. դրամ

Ծախսային մասում քաղաքապետարանը ուշադրությունը կենտրոնացրել է քաղաքի ասֆալտապատման, սանիտարական մաքրման, լուսավորության աշխատանքներին: Կատարվել են 69636.8 հազ. դրամ փողոցների փոսային նորոգման, 450381,7 հազ. դրամ հիմնանորոգման աշխատանքներ, 47956,0 հազ. դրամ մայթերի հիմնանորոգման աշխատանքներ, 60639,0 հազ. դրամ կոյուղու անցկացման համար: 2021թ. համայնքապետարանի ՀՈԱԿ-ների կողմից մուտք է եղել 145366.1 հազ. դրամ եկամուտ.

նույն թվում

ա/ նախադպրոցական հիմնարկների երեխայի պահպանման վարձ – 80179.3 հազ. դրամ,

բ/ երաժշտական դպրոցների երեխաների ուսման վարձ – 27413.8 հազ. դրամ;

գ/ մարզադպրոցի երեխաների ուսման վարձ – 37773.0:

Տրվել է ՀՈԱԿ-ներին սուբսիդիա – 685140.7 հազ. դրամ:

ՈՍԿԵՀԱՏ

Ոսկեհատ համայնքի բյուջեով 2021թ. նախատեսվել են եկամուտներ 106380.2 հազ. դրամ, նույն թվում դոտացիա հանրապետական բյուջեից 65576.5 հազ. դրամ:

Բյուջեի եկամուտների փաստացի մուտքը կազմել է 114270.4 հազ. դրամ (107.4%), այդ թվում վարչական բյուջեի սեփական եկամուտներ՝ 124.3%: Տարեսկզբի ազատ մնացորդը կազմում է 57810.7 հազ. դրամ:

Ոսկեհատ համայնքի բյուջեի 2021թ. տարեկան եկամուտների պլան-կատարողականը, ինչպես նաև 2020թ. տարեկան փաստացի կատարողականը ունի հետևյալ տեսքը.

Հազ.դրամ

Հ/Հ		ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 2021թ. Պլան տարեկան	2021թ. Կատարող.	2021թ. Կատ.%	2020թ. կատ.	2021/2020 նկատմ.
1	**Հարկային եկամուտներ ընդամենը, որից՝**	**23631,5**	**24361,7**	**103,1%**	**20241,3**	**120,4%**
7-1	Գույքահարկ շինություններից	1415,0	910,6	64,4%	559,5	162,8%
7-2	Գույքահարկ փոխադրամիջոցներից	13616,5	14842,9	109,0%	11873,7	125,0%
9-1-2	Հողի հահտ	8600,0	8608,2	100,1%	7808,1	110,2%
45	**Տեղական տուրքեր ընդամենը**	**290,0**	**551,6**	**190,2%**	**405,0**	**136,2%**
45-6	Հիմնական և ոչ հիմնական շին. ներսում ոգելից խմ. վաճ. համար	30,0		0,0%	50,0	0,0%
45-10	Հեղուկ վառելիքի և սեղմված գազի վաճառքի թույլ.	200,0	210,0	105,0%	200,0	105,0%
45-32	Հիմնական շինությունների շինարարութ. թույլտվության համար	60,0	341,6	569,3%	155,0	220,4%
4	**Ոչ հարկային եկամուտներ, որից՝**	**3480,0**	**9151,5**	**263,0%**	**999,2**	**915,9%**
22-50	Գյուղ. նշան. հողերի վարձավճար	90,0	128,8	143,1%	110,0	117,1%
46	Տեղական վճարներ ընդամենը	3390,0	1624,0	47,9%	79,8	2035,1%
	ա/ բնակ. սպասարկման և աղբի վարձ բնակչությունից	1790,0	114,0	6,4%	79,8	142,9%
	բ/ մանկապարտեզի ծնող. միջոց	1600,0	1510,0	94,4%		
28-60	Ինքնակամ շինությունների օրինականացման վճար		7398,7		809,4	914,1%
	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	**27401,5**	**34064,8**	**124,3%**	**21645,5**	**157,4%**
37-1	Դոտացիա	65576,5	65576,5	100,0%	57654,4	113,7%
37-3	Այլ դոտացիա				1331,6	0,0%
	ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	**92978,0**	**99641,3**	**107,2%**	**80631,5**	**123,6%**
29-50	Հողի օտարումից մուտքեր		1299,0		1199,5	108,3%
38-1	Պաշտոնական կապիտալ տրանսֆերտ	13402,2	13330,1	99,5%		
	Վարչական բյուջեի տարեսկզբի մնացի տեղափոխում ֆոնդային բյուջե	35958,5	35958,5	100,0%	24570,9	146,3%
	ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԸՆԴԱՄԵՆԸ	**13402,2**	**14629,1**	**109,2%**	**1199,5**	**1219,6%**
	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**106380,2**	**114270,4**	**107,4%**	**81831,0**	**139,6%**
	Ն/Թ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	**27401,5**	**35363,8**	**129,1%**	**22845,0**	**154,8%**

Ոսկեհատ համայնքի բյուջեի 2021թ. սեփական եկամուտների գծով նախատեսված 27401.5 հազ. դրամի դիմաց մուտք է եղել 35363.8 հազ դրամ (129.1%):

2021թ. Ոսկեհատ համայնքի բյուջեից ծախս է կատարվել 82984.9 հազ. դրամ:

Ըստ բնագավառների կատարվել են ծախսեր.

13. Համայնքապետարանի պահպանման ծախսեր - 39981.5 հազ. դրամ
14. Կրթության համակարգի ծախսեր- 10570.0 հազ. դրամ
15. Մշակույթի համակարգի ծախսեր - 6918.9 հազ. դրամ
16. Գյուղատնտեսական ծախսեր - 570.4 հազ. դրամ
17. Աղբահանություն- 2200.0 հազ. դրամ
18. Սոցիալական ֆոնդի ծախսեր- 2340.0 հազ. դրամ
19. Համաքաղաքային միջոցառումների ծախսեր- 1494.2 հազ. դրամ
20. Ֆոնդային բյուջեի միջոցներից ծախսվել է- 18909.9 հազ. դրամ

2021թ. համայնքապետարանի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի կողմից մուտք է եղել 1510.0 հազ. դրամ եկամուտ:

Տրվել է մանկապարտեզ ՀՈԱԿ-ին սուբսիդիա – 10570.0 հազ. դրամ:

ԳԼՈՒԽ 3. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ 2022-2026ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ձեռնարկատիրության և գործարար ներդրումների համար նպաստավոր միջավայրի ստեղծումը, ենթակառուցվածքների զարգացումը, նոր ներդրումների համար նպաստավոր պայմանների ստեղծումը, աշխատատեղերի ավելացումը, բնակչության բարեկեցության եւ համաչափ զարգացման ապահովումը Վաղարշապատի զարգացման 2022-2026թթ. հնգամյա ծրագրի գերակայություններից է: Այս ուղղությամբ լուծում պահանջող գլխավոր խնդիրն է համայնքապետարանի՝ գործող գլխավոր գործատունելու լինելու փաստը: Անհրաժեշտ է այս ուղղությամբ քայլեր ձեռնարկել՝ հիմնահարցի լուծման համար:

Համայնքում իրականացվող կառուցապատման աշխատանքները պետք է հենված լինեն պատմամշակութային արժեքների և ճարտարապետական հուշարձանների պահպանման սկզբունքների վրա՝ հաշվի առնելով բնակիչների իրավունքների պաշտպանության և սեյսմիկ անվտանգության բոլոր հիմնադրույթները:

Հիմնախնդիրներ

1. Քաղաքային և գյուղական բնակավայրերի զարգացման քաղաքաշինական նոր ռազմավարության մշակման անհրաժեշտություն:
2. Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար լիարժեք մատչելիության բացակայություն:
3. Հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատման արդյունքում հանրային շահի ոտնահարում:
4. Ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով անհրաժեշտ վերահսկողության ոչ բավարար խստության:
5. Էջմիածին քաղաքի ճարտարապետական կերպարի ձևավորմում, հատկապես կենտրոնական հատվածների ներդաշնակեցման և շենքերի արտաքին տեսքի վերանայման լուծումների իրականացման անհրաժեշտություն:
6. Վաղարշապատի միկրոռեգիոնալ հատակագծի իրագործմանն ուղղված միջոցառումների իրականացման, համապատասխան ծրագրերի, գոտիավորման նախագծերի մշակման անհրաժեշտություն:
7. Քաղաքաշինական ծրագրերի և դրանց առաջնահերթությունների վերաբերյալ հանրային լայն քննարկումների իրականացման անհրաժեշտություն:
8. Քաղաքաշինական ծրագրերի իրականացման նպատակով համայնք-մասնավոր հատված համագործակցության զարգացմանն ուղղված քայլերի իրականացման անհարժեշտություն:

2022-2026 թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է քայլեր ձեռնարկել բացառելու հանրային կանաչ տարածքների հաշվին կառուցապատումը և դրա արդյունքում հանրային շահի ոտնահարումը:
2. Ապօրինի շինարարությունը բացառելու նպատակով նախատեսվում է իրականացնել խիստ վերահսկողություն՝ նպատակ ունենալով կարգավորել ոլորտում առկա խնդիրները: Հսկողության

խստացմանը զուգահեռ պլանավորվում է իրականացնել նաև հանրային լայն իրազեկում՝ ապօրինի շինարարության և հողազավթումների իրավական անխուսափելի հետևանքների վերաբերյալ:
3. Մասնագիտական ու հանրային քննարկումների միջոցով մշակել քաղաքի զարգացման ռազմավարություն, որն ուղղված կլինի ենթակառուցվածքների զարգացմանը, բնակչության բոլոր շերտերի կարիքների և կենսական պահանջների բավարարմանը, համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, քաղաքային ենթակառուցվածքների կարգավորմանը, կնպաստի քաղաքացի-համայնքապետարան կապի ամրապնդմանն ու քաղաքացիների անմիջական մասնակցությանը քաղաքային կարևոր հիմնախնդիրների վերաբերյալ որոշումների կայացմանը և լուծմանը:

4. 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների համար իրականացնել վերաբնակեցման ծրագիր՝ օգտագործելով սոցիալական բնակարանաշինության ոլորտում համայնք-մասնավոր հատված համագործակցության հնարավորությունները: Ծրագրի նպատակն է ապահովել 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների անվտանգությունը՝ միաժամանակ նպաստելով համայնք-մասնավոր համագործակցության զարգացմանը:

5. Արևային էներգիայի և էներգախնայող համակարգերի օգտագործմամբ ընդլայնել փողոցների լուսավորման ցանցը: Ծրագրի նպատակն է խթանել Վաղարշապատում էներգաարդյունավետության և էներգախնայողության մակարդակի բարձրացմանը՝ օգտագործելով էներգիայի ստացման այլընտրանքային աղբյուրներ և ժամանակակից տեխնոլոգիաներ:

6. Հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել շենքշինությունների և ենթակառուցվածքների մատչելիություն: Ծրագրի նպատակն է ստեղծել հարմարավետ քաղաքային միջավայր և անհրաժեշտ պայմաններ հաշմանդամություն ունեցող անձանց համար, ապահովել ազատ տեղաշարժման հնարավորություն, կառուցել թեքահարթակներ:

7. Արևային էներգիայի և էներգախնայող համակարգերի հիմնական կիրառում քաղաքային լուսավորության ոլորտում:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Էջմիածնի փողոցների երկարությունը կազմում է շուրջ 340կմ, Էջմիածին քաղաքում առկա են շուրջ 164 փողոցներ, իսկ փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի, բակային տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 1090000քմ: Հարմարավետություն և անվտանգություն ապահովող շինարարական աշխատանքների իրականացումից բացի, բարեկարգման ծրագրերը ենթադրում են նաև հոգևոր կենտրոնին հարիր արտաքին տեսքի ապահովում: Շարունակաբար կատարվում են մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես, վերանորոգվում կամ փոխարինվում են նորերով մայթերի ձևավոր բետոնե, բազալտե սալիկները, վերանորոգվում և տեղադրվում են նոր բետոնե և բազալտե եզրաքարեր: Պատշաճ տեսքն ապահովվում է նաև շենքերի ճակատային հատվածների մաքրման, լվացման, նորոգման աշխատանքները: Համայնքի բնակիչների և հյուրերի հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ հարմարավետ պայմաններ ստեղծելը հանդիսանում է գերակա խնդիր, որի լուծման նպատակով նոր հանգստի գոտիների, այգիների, պուրակների ստեղծման, բակային տարածքների ու խաղահրապարակների ստեղծման, հիմնանորոգման և պահպանման կատարված աշխատանքների ծավալը անհրաժեշտ է մեծացնել: Ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի խթանման նպատակով մեծ ուշադրություն է հատկացվում բակերի բարեկարգման աշխատանքներին, ինչպես նաև մինի ֆուտբոլի դաշտերի կառուցմանը: Այժմ Էջմիածնի տարբեր թաղամասների բակային հատվածներում եւ այգիներում կան առանձնացված ֆուտբոլի դաշտեր, որոնք հողապատ կամ ասֆալտապատ են, հիմնականում առանձնացված չեն պատնեշներով, չունեն համապատասխան կահավորում: Առաջիկա հինգ տարիներին կձեռնարկվեն քայլեր՝ ստեղծելու միջազգային ստանդարտների համապատասխան մինիֆուտբոլի դաշտեր համայնքի տարբեր հատվածներում, որոնք նախատեսված կլինեն այլ սպորտաձևերի համար ևս:

Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական և մարզական հաստատություններում հիմնանորոգման աշխատանքների շարունակական ապահովումը ոլորտի գերակայություններից է: Առաջիկա տարիներին մեր գլխավոր առաքելություններից է լինելու համայնքապատկան ՀՈԱԿ-ների շենքային պամանների շարունակական, որոշ դեպքերում՝ ամբողջական բարեկավումը: Համայնք տեսքին, այգիներին ու հանրային հանգստի գոտիներին ինքնատիպ գրավչություն են հաղորդում շատրվանները, ջրավազանները: Վաղարշապատի համայնքապետարանի հաշվեկշռում առկա է 13 ջրային կառույց, որոնց անխափան աշխատանքը ապահովելու նպատակով հայանքապետարանի տարեկան

աշխատանքային ծրագրերով նախատեսվում են ընթացիկ նորոգման, ներկման, մաքրման և պահպանման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

1. Հանգստի նոր գոտիների և այգիների ստեղծման անհրաժեշտություն
2. Բակերի բարեկարգման անհրաժեշտություն
3. Էջմիածին և Ոսկեհատ բնակավայրերի փողոցների բարեկարգման, հիմնանորոգման անհրաժեշտություն:
4. Հողային ծածկույթով ճանապարհների վերակառուցման, ասֆալտապատման անհրաժեշտություն:
5. Կենտրոնական և երկրորդական մայթերի վերանորոգման անհրաժեշտություն:
6. Կամրջային կառույցների հիմնանորոգման անհրաժեշտություն:
7. Գործող զբոսայգիների բարեկարգման և կանաչ տարածքի ընդարձակման անհրաժեշտություն:
8. Շենքերի ճակատային մասերի արդիականացման, գրավչության հաղորդման, մաքրման, լվացման, ներկման անհրաժեշտություն:
9. Ջրային ավազանների համակարգերի թարմացում, անխափան աշխատանքի ապահովում:

2022-2026թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել փողոցների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում՝ նպատակ ունենալով համայնքում ստեղծել բարեկարգ ճանապարհներ և ապահովել անվտանգ երթևեկություն:

Համայնքի կայուն և համաչափ զարգացման գերակա սկզբունքի համատեքստում աշխատանքներն իրականացվելու են բոլոր թաղամասերում՝ շեշտը դնելով ծայրամասային թաղամասերի վրա, որպեսզի ապահովվի համայնքի համաչափ զարգացումը. Սա եղել է մեր որդեգրած քաղաքականությունը նախկինում ևս: Նախատեսվում է իրականացնել ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգում (գրունտային), հողային շերտով ճանապարհների ասֆալտապատում:

• Համայնքն առավել հարմարավետ և գեղեցիկ դարձնելու նպատակով բարեկարգման աշխատանքներ կկատարվեն նաև բակային տարածքներում:

2. Նախատեսվում է իրականացնել եզրաքարերի և մայթերի վերանորոգում/սալիկապատում, թեքահարթակների կառուցում, բացակայող հատվածներում նոր եզրաքարերի տեղադրում, մայթերի վնասված, քանդված և բացակայող հատվածներում նոր սալիկների տեղադրում: Համայնքի զարգացման ծրագրերով հաշմանդամություն ունեցող քաղաքացիների և մանկասայլակով շրջող քաղաքացիների համար մատչելի պայմաններ ապահովելու, նրանց տեղաշարժը հեշտ և ապահով դարձնելու նպատակով խաչմերուկներում, հասարակական վայրերում և հանգստի գոտիներում կկառուցվեն թեքահարթակներ:

Կիրականացվեն նաև մայթերի զավթած հատվածների ազատմանն ուղղված աշխատանքներ:

3. Շարունակել կահավորել բակային տարածքները խաղահրապարակներով և մարզասարքերով, ապահովել նպաստավոր պայմաններ ակտիվ և պասիվ ժամանցի համար:

Նախատեսվում է հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում և պահպանում, հենասյուների վերանորոգում, բակերի բարեկարգում՝ ներառյալ խաղահրապարակների և մինի ֆուտբոլի դաշտերի կառուցում:

Նախատեսվում է իրականացնել առկա հանգստի գոտիների և զբոսայգիների պատշաճ պահպանմանն ուղղված աշխատանքներ, ինչպես նաև գույքագրել համապատասխան վայրեր՝ ապահովելով նոր հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում՝ համայնքի համաչափ զարգացման սկզբունքով:

Ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի խթանման նպատակով մեծ ուշադրություն կհատկացվի բակերի բարեկարգման աշխատանքներին, ինչպես նաև խաղահրապարակների կառուցմանը:

Նախատեսվում է իրականացնել բակային տարածքների բարեկարգման ծրագիր՝ Էջմիածնի բոլոր թաղամասերում և Ոսկեհատ վարչական շրջանում, կառուցել նոր խաղահրապարակներ, մարզական հրապարակներ և ֆուտբոլի դաշտեր, վերանորգել և բարեկարգել հին խաղահրապարկները:

4. Նախատեսվում է իրականացնել դեռևս չվերանորոգված նախադպրոցական հաստատությունների վերջնական հիմնանորոգում՝ երեխաների կրթության համար նպաստավոր և հարմարավետ պայմանների ապահովման նպատակով: Նախատեսվում է թարմացնել, վերանորոգել կահույքը, խաղային և կենցաղային գույքը:

5. Նախատեսվում է վերագործարկել չգործող շատրվաններն ու նախաձեռնել նորերի կառուցումը: Կիրականացվեն ջրային կառույցների շահագործման և պահպանման աշխատանքներ

համայնքապետարանի հաշվեկշռում առկա 13 ջրային կառույցներում: Կուսումնասիրվեն և կմշակվեն հանգստի գոտիներում շատրվանների կառուցման հնարավորությունները և կկառուցվեն նորերը:

6. Նախատեսվում է իրականացնել Վաղարշապատ համայնքի փողոցներում աղբամանների հարմարեցված հարթակների կառուցման աշխատանքներ՝ փողոցների պատշաճ վիճակի, աղբահանության ծառայության մատուցման որակի բարելավման նպատակով:

7. Նախատեսվում է իրականացնել առանց կոյուղատար համակարգի թաղամասերում դրանց կառուցումը:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Վաղարշապատում (Էջմիածնում և Ոսկեհատում ընդհանուր առմամբ) առկա է 187 բազմաբնակարան շենք, որից 52-ի կառավարումն իրականացվում է թվով 8 համատիրությունների կողմից: Բնակելի ֆոնդի ընդհանուր օգտագործման տարածքների նորոգումը ոլորտի կարևորագույն խնդիրն է, որը պետք է իրականացվի հաշվի առնելով բնակիչների կարիքները և անհրաժեշտությունը:

Հիմնախնդիրներ

1. Ընդհանուր օգտագործման տարածքների, այդ թվում՝ հարթ և թեք տանիքների վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն:
2. Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների ոչ բավարար մակարդակ:
3. Շենքերի արտաքին հատվածների անհրապուրություն:
4. Բազմաբնակարան շենքերի ոչ պատշաճ կահավորում՝ հենաշարժողական խնդիրներով մարդկանց տեղաշարժի դյուրին կազմակերպման համար:
5. Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի երբեմն անմխիթար վիճակ:

2022-2026թթ. նախատեսվող աշխատանքները

1. Նախատեսվում է ապահովել բնակելի ֆոնդի ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման աշխատանքների շարունակականությունը, աջակցել բնակչության կենսապահովման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:
2. Բազմաբնակարանային շենքերի կառավարման և սպասարկման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է ներգրավել մասնագիտացված ընկերություններ՝ ոլորտում ապահովելով մրցակցային դաշտ, մատուցել ծառայություններ և իրականացնել ընդհանուր սեփականության պատշաճ պահպանման աշխատանքներ:
3. Նախատեսվում է վերանորոգել բազմաբնակարան շենքերի հարթ տանիքները:
4. Նախատեսվում է մշակել և իրականացնել բազմաբնակարան շենքերի թեք տանիքների ամբողջական հիմնանորոգման հիմնախնդրի հայեցակարգ:
5. Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում:

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍԱՆՄԱՔՐՈՒՄ

Վաղարշապատ համայնքում առաջնային լուծում պահանջող հիմնահարցերից մեկը աղբահանության խնդիրն է: Կոշտ թափոնների կառավարում Էջմիածնի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի, բակային տարածքների և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 1090000քմ: Վաղարշապատ համայնքի տարածքից օրական հավաքվում և տարբեր աղբավայրեր է տեղափոխվում շուրջ 1000-1300 տոննա աղբ:

Համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում է համայնքապետարանի «Բնակարանային և կոմունալ» վարչության կողմից: Համայնքի տարածքից Շահումյանի աղբավայր է տեղափոխվում տարեկան միջին հաշվով 32850-36500 տոննա կենցաղային և շինարարական աղբ: Այն ի սկզբանե չի նախագծվել և կառուցվել որևէ ընդունված ստանդարտով որպես աղբավայր, չի համապատասխանում միջազգային տեխնիկական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշների և բացառապես հանդիսանում է որպես աղբի կուտակման վայր: Աղբավայրը չունի անհրաժեշտ ենթակառուցվածքներ հավաքվող աղբն ընդունելու համար: Հեռացվող թափոնները ուղղակիորեն բեռնաթափվում ու խառնվում են թափոնների հավաքագրման առաջնային գծում: Նվազագույն ընդունելի շահագործում իրականացնելու համար աղբավայրն ապահովված չէ անհրաժեշտ քանակությամբ և որակի մեքենա-մեխանիզմներով:

Հիմնախնդիրներ

1. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների անբավարար մակարդակ, տեխնիկական միջոցների քանակի և որակի լրջագույն խնդիր:

2. Վաղարշապատի հանրային տարածքների մաքրման, աղբահանության և ձնամաքրման նոր մեխանիզմների անհրաժեշտություն:

3. Բնակչության շրջանում աղբի տեսակավորման և տարբերակման մշակույթի ձևավորման անհրաժեշտություն:

4. Գործող աղբավայրերի մեկուսացման անհրաժեշտություն՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան:

5. Չսահմանված վայրերում աղբ թափելու նկատմամբ վերահսկողության խստացման անհրաժեշտություն:

6. Տնտեսվարողների տիրապետության տարածքներում մաքրության և բարեկարգման նորմների սահմանման անհրաժեշտություն:

2022-2026թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Վերանայել Էջմիածնի և Ոսկեհատի փողոցների մաքրման, աղբահանության և ձնամաքրման աշխատանքների կազմակերպման գործընթացը: Նախատեսվում է լիարժեք և արդյունավետ լուծում տալ աղբահանության, սանիտարական մաքրման և ձնամաքրման ոլորտի հիմնախնդիրներին և ապահովել եվրոպական չափանիշներին համապատասխան որակյալ ծառայություններ:

2. Կարիքների գնահատմամբ, ըստ անհրաժեշտության, բաց և թափանցիկ մրցույթի միջոցով ներգրավել մասնավոր օպերատոր՝ աղբահանության աշխատանքների կազմակերպման համար:

3. Բնակարանային և կոմունալ վարչության ավտոպարկը համալրել թարմացված գույքով, ինչը կնպաստի աղբահանության աշխատանքների կատարման արդյունավետության բարձրացմանը:

4. Նախատեսվում է մեծ և փոքր աղբամաններով կահավորել Էջմիածնի և Ոսկեհատի փողոցների անհրաժեշտ հատվածները, այգիները, հասարակական նշանակության վայրերը:

5. Սանիտարական մաքրման համար օգտագործել ժամանակակից տեխնիկա, սանմանքրող մեքենաներ՝ նվազագույնի հասցվելով մարդկային ներուժի կիրառումն ու գործոնը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Վաղարշապատ համայնքի արտաքին լուսավորության ցանցի զարգացման ծրագրերի գլխավոր նպատակն է համայնքի բնակչության անվտանգության ապահովումը, ճանապարհատրանսպորտային պատահարների թվի կրճատումը, երեկոյան և գիշերային ժամերին փողոցների և պատմամշակության վայրերի գրավչության ավելացումը: Նախորդ տարիներին, արտաքին լուսավորությունը օգտագործելով որպես հրապարակամերձ հատվածի և Էջմիածնի կարևոր պատմամշակութային վայրերի ընդգծման հնարավորություն, լուսավորվել են կենտրոնական հրապարակին հարող շենք-շինությունները, արձանները:

Էներգախնայող համակարգերի և լուսատուների կիրառման հաշվին լուսավորվող ժամանակահատվածի ավելացումը, ցանցի արտաքին տեսքի արդիականացումը, շահագործման դյուրինացումը ոլորտի գերակայություններից է:

Հիմնախնդիրներ

1. Համայնքում արտաքին լուսավորության ցանցի արդիականացման, կառավարման արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն:

2. Էջմիածին և Ոսկեհատ բնակավայրերի չլուսավորվող փողոցների, պատմամշակության կոթողների, արձանների, բակերի, նրբանցքների և խաղահրապարակների լուսավորման անհրաժեշտություն:

3. Բյուջեի խնայողությունների ապահովման անհրաժեշտություն:

2022-2026թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է արևային էներգիայի և էներգախնայող համակարգերի օգտագործմամբ ընդլայնել փողոցների արտաքին լուսավորության համակարգը:

2. Նախատեսվում է արդիականացնել քաղաքային լուսավորության համակարգը՝ ապահովելով բոլոր փողոցների, բակային տարածքների և հանրային տարածքների արտաքին լուսավորությունը:

3. Նախատեսվում է իրականացնել դեռ շահագործվող հին լուսատուների փոխարինում LED լուսատուներով:

4. Նախատեսվում է փոխարինել վթարային հենասյուները, անհրաժեշտության դեպքում հաշվարկել և վերանայել հենասյուների բարձրությունը, դրանց դիրքադրման հեռավորությունը, երթևեկելի և հետիոտնի համար նախատեսված վայրերում ապահովել անվտանգություն:

5. Նախատեսվում է էներգախնայող համակարգերի ներդրմամբ ապահովել ծախսերի խնայողություն:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Տրանսպորտային կանոնավոր և բազմագիծ ցանցի ձևավորումը համայնքի հնգամյա զարգացման հրատապային առաջնահերթություններից է: Համայնքների խորոշացման ծրագրի արդյունքում ձևավորված Վաղարշապատ համայնքի երկու բնակավայրերը՝ Էջմիածինը և Ոսկեհատը չունեն միմյանց կապող ուղիղ տրանսպորտային հանգույց, Էջմիածնի ներհամայնքային փողոցներում չկան գործող կանոնավոր ուղեգծեր՝ թաղամասերը միմյանց և կենտրոնին միավորող:

Հիմնախնդիրներ

1. Տրանսպորտային ցանցի բացակայություն:
2. Էջմիածնից դեպի Ոսկեհատ ներհամայնքային ուղիղ տրանսպորտի բացակայություն:
3. Ոլորտի գիտակ մասնագետների ներգրավում և ներդրումների ուղղությամբ աշխատանքների իրականացում:

2022-2026թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Եկամտի այլընտրանքային աղբյուրների ներգրավմամբ, համագործակցային կապերի հաստատմամբ ստեղծել միասնական տրանսպորտային ցանց՝ համայնքի երկու բնակավայրերը միմյանց կապող:
2. Աշխատանքերի իրականացման համար հրավիրել մասնագետների, կազմակերպել խորհրդատվություններ:
3. Կազմել կանոնոնավոր երթուղիներ, սահմանել աշխատաժամեր:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Համայնքի բնակչությունը կազմում է 63415 մարդ:

2021 թվականի տվյալներով նպաստառու է Էջմիածնի շուրջ 3000 բնակիչ: Համայնքում բնակվում է բազմազավակ շուրջ 200 ընտանիք:

Հասարակության սոցիալական պաշտպանությունը յուրաքանչյուր պետության գլխավոր գործառույթներից մեկն է: Սոցիալական ապահովության բնագավառում Վաղարշապատի համայնքապետարանի ռազմավարությունն ուղղված է քաղաքացիների սոցիալական շահերի պաշտպանությանը, սոցիալական ռիսկերի արդյունավետ կառավարմանը, դրանց հնարավոր նվազեցմանը: Սոցիալական պաշտպանությունը հանդիսանում է նպատակային սոցիալական քաղաքականության ազդեցիկ գործիք համայնքում կայուն սոցիալական միջավայրի ձևավորման համար: Սոցիալական պաշտպանության համակարգի համար անհրաժեշտ կարևոր գործոն է կայուն և զարգացող տնտեսությունը:

Հաշվի առնելով երկրում աղքատության զգալի մակարդակը, Արցախյան պատերազմների հետևանքները, վերջին տարիներին զարգացած սահմանային իրադարությունը, և այն, որ հասարակության կարիքավոր խավն է ենթարկվում առավել մեծ թվով ռիսկերի, Վաղարշապատի զարգացման 2022 թվականի ծրագրում նախատեսված՝ պետական և համայնքային սոցիալական ծրագրերն ուղղված են լինելու ռիսկերի կանխարգելմանը՝ ընտանիքի աղքատության, հաշմանդամության, հիվանդության, ծնողազրկության, գործազրկության, ընտանիքում կոնֆլիկտների, բռնության, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու և այլ պատճառների հետևանքներով դժվար իրավիճակներում հայտնված անձանց աջակցությանը՝ դժվարությունները հաղթահարելու կամ իրավիճակը բարելավելու նպատակով:

Ուշադրության կենտրոնում են պահվելու աղքատ տարեցների, բազմազավակ ընտանիքների, Արցախյան, Հայրենական Մեծ պատերազմների վետերանների, մասնակիցների Հայաստանի և Արցախի սահմանների պաշտպանության ժամանակ զոհվածների ընտանիքների, վերաբնակեցված քաղաքացիների, հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների, բազմազավակ և միածնող ընտանիքների և սոցիալական ռիսկի այլ խմբերի սոցիալական պաշտպանության խնդիրները:

Այստեղ է սկիզբ առնում պետության/համայնքի կարգավորիչ դերը: Սոցիալական պաշտպանության համակարգը բազմաբնույթ է: Հաշվի առնելով սոցիալական պետության առջև դրված խնդիրները, սոցիալ-տնտեսական և հասարակական կյանքում արձանագրվող գործընթացները անհրաժեշտ է կատարելագործել սոցիալական համագործակցության համակարգերը, որը կնպաստի համակարգի արդյունավետությանը:

ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ 2015 թվականից ներդրվել է «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության» կանոնակարգը, որի նպատակը բազմամասնագիտական աշխատանքային խմբի կողմից սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց ընտանիքների հայտնաբերումն է, անհատական սոցիալական ծրագրերի կազմումն ու դրա իրականացումը, այդ թվում և խնդրահարույց դեպքերում սոցիալական դեպքի վարման կարգի լայնորեն կիրառումը, որը կարող է անհատական սոցիալական ծրագրով կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի /ընտանիքների/ սոցիալական կարիքների գնահատման հիման վրա հասանելի ռեսուրսների որոնման միջոցով իրականացնել սոցիալական տարաբնույթ ծառայությունների և սոցիալական աջակցությունների տրամադրման ծրագրեր, քանի որ միայն պետական նպաստները և համայնքային ֆինանսական միջոցները բավարար չեն վերը նշված ընտանիքների բազմաբնույթ սոցիալական խնդիրների լուծման համար: Կարևոր խնդիր է նաև սոցիալական աջակցության համակարգի մի շարք խնդիրների / աշխատողների՝ ժամանակակից սոցիալական աշխատանքի, սոցիալական աջակցության մասին նորագույն գիտելիքների և գործիքների կիրառման վերաբերյալ վերապատրաստումների կազմակերպումը, նրանց և ՍԱՏԲ-ների մասնագետների՝ տունայցի դեպքերում գործուղման ծախսերի նախատեսումը: Սոցիալական աշխատողների կրթական ցենզի բարձրացումը և դերային բաշխվածությունը նպաստելու է պետության ազգային սոցիալական քաղաքականության արդյունավետ իրականացմանը, քաղաքացիների սոցիալական իրավունքների իրացմանը:

Նպատակ է, որպեսզի սոցիալական աշխատողը կարողանա օգտագործել շահառուի իրավունքների գերակայությունը, ռեսուրսների սակավության պայմաններում հատկապես, երբ սոցիալական աշխատողը կրում է մասնակի կամ լրիվ պատասխանատվություն ռեսուրսների բաշխման նկատմամբ: Սոցիալական աշխատանքի դերը, բովանդակությունը, ինչպես նաև լիազորությունների շրջանակը ավելի հստակ սահմանելու և «չափելի» դարձնելու համար գնալով ավելի հրատապ և արդիական է դառնում սոցիալական ծառայությունների ինտեգրումը:

Արցախյան 2020 թվականի պատերազմի հետևանքով զգալի փոփոխություններ առաջ եկան Վաղարշապատի բնակչության թվաքանակում, առաջ եկան նոր սոցիալական, ինտեգրման խնդիրներ, որոնք պահանջում են համակարգային կարգավորումներ:

Նախորդ տարիներին մեկնարկած սոցիալական աջակցության ծրագրի շրջանակում Վաղարշապատ համայնքի /Էջմիածին և Ոսկեհատ բնակավայրեր/ սոցիալական ֆոնդից ֆինանսական աջակցություն է տրամադրվում կարիքավոր ընտանիքների, առավելապես՝ առողջապահական, սոցիալական օգնության նկատառումներով: Շարունակաբար բարձր առաջիմությամբ և/կամ սոցիալապես անապահով ընտանիքում բնակվող ուսանողի տրամադրվել է ուսման վարձավճարի աջակցություն: Սոցիալական աջակցության ոլորտներում ներառված են նաև՝ թոշակառուները, նպաստառուները, միայնակ տարեց քաղաքացիները, հաշմանդամություն ունեցող անձինք, բազմազավակ ընտանիքները:

Նախորդ տարիներին պարբերական այցեր և հանդիպումներ են եղել համայնքի տարեց քաղաքացիների, Արցախյան պատերազմների հետևանքով զոհված քաղացիների հարազատներին: 2020 թվականի պատերազմի հետևանքով մեր համայնքում ապաստանած քաղաքացիները ևս համայնքապետարանի շարունակական հոգածության և ուշադրության ներքո են:

Սոցիալական աջակցության տրամադրման ոլորտում համայնքի բնակիչների հոգսը թեթևացնելու համար ակտիվ համագործակցային և գործընկերային կապեր են հաստատվել տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, ստեղծվել է շահառուների հաշվառման բազա՝ կյանքի կոչելով բազում սոցիալական ծրագրեր: Հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում բազմաթիվ ընտանիքների հատկացվել է նյութական աջակցություն՝ սնունդ և հիգիենայի պարագաներ:

Նախորդ տարիներին համակողմանի գործակցային կապեր են ստեղծել «Կարմիր խաչ»-ի հայկական գրասենյակի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), «Օքսիջն» կազմակերպության, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության, «Օգնենք հայ մանուկներին» բարեգործական կազմակերպության, բազմաթիվ անհատ բարերարների հետ, որոնց աջակցությամբ ձեռնարկվել են մի շարք սոցիալական նախագծեր:

2020 թվականի 44-օրյա պատերազմի հետևանքով տեղահանված և համայնքում ապաստանած ընտանիքներին շարունակաբար տրամադրվում է պարենային և տնտեսական պարագաների աջակցություն: Անապահով ընտանիքներին, միայնակ տարեց քաղաքացիներին պարբերաբար տրադրվում է աջակցություն՝ համայնքապետարանի բյուջեից, տարբեր ՀԿ-ների, կազմակերպությունների հետ համագործակցությամբ, անհատ բարերարների նախաձեռնությամբ: 44-օրյա պատերազմի ընթացքում զոհված բնակիչների ընտանիքները ևս համայնքապետարանի մշտատև ուշադրության առանցքում են:

Մեր հատուկ ուշադրությունը և վերաբերմունքը, հատկապես կա հաշմանդամություն և հատուկ խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ:

Ակտիվ համագործակցություն է ստեղծվել և պարբերաբար այցելություններ են կատարվում «Երջանկության ճանապարհ» հասարակական կազմակերպություն, որտեղ ցերեկային խնամք են ստանում հաշմանդամություն և հատուկ խնդիրներ ունեցող 18-69 տարեկան անձինք: Մեկ տարվա ընթացքում կրկնակի մոնիթորինգ և այցելություններ են կատարվել հաշմանդամություն ունեցող անձանց, սոցիալապես խոցելի և բազմազավակ ընտանիքներին ցուցաբերվել է բարոյահոգեբանական և սոցիալ–հոգեբանական աջակցություն, համապատասխան արձագանք է տրվել և աջակցություն ցուցաբերվել հոգեբանական և ֆիզիկական բռնության ենթարկված կանանց և երեխաների:

Տարբեր շահառուների հետ աշխատելիս և տարբեր խնդիրներ լուծելիս համայնքապետարանի սոցիալական աշխատողները լինում են խորհրդատուի, միջնորդի, իրավապաշտպանի կարգավիճակում՝ փորձելով հնարավորինս փոփոխել իրավիճակներ:

Այս ոլորտում համայնքապետարանը շարունակելու է օգնել անհատներին և խմբերին՝ լուծելու իրենց սոցիալական հիմնախնդիրները՝ այդ նպատակով օգտագործելով առկա միջոցներն ու հնարավորությունները:

Հիմնախնդիրներ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ձևավորման և նրանց՝ հասարակությանն աստիճանական ինտեգրման անհրաժեշտություն:
2. Բազմազավակ ընտանիքների բնակարանային և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման անհրաժեշտություն:
3. Տեղահանված քաղաքացիների հասարակական ինտեգրման և սոցիալական օժանդակության ծրագրերի իրականացման անհրաժեշտություն:
4. Անօթևան անձանց հիմնախնդիրների լուծման անհրաժեշտություն:

2022-2026 թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Կիրականացվեն պետական սոցիալական օժանդակության ծրագրեր: Ծրագրով նախատեսվում է պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրագործում, սոցիալական ոլորտում բարեփոխումների արդյունքում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում, որը կնպաստի սոցիալական ծառայությունների մատուցման մատչելիությանը: Կիրականացվի համագործակցություն միջգերատեսչական սոցիալական համագործակցության շրջանակներում աջակցող ցանցի միջոցով, խնդրահարույց դեպքերում սոցիալական դեպքի վարման կազմակերպում:
2. Նախատեսվում է աջակցություն՝ ռիսկային իրավիճակներում հայտնված և սոցիալապես խոցելի մարդկանց (տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, տեղահանվածների, անօթևանների, ազատազրկման վայրերից ազատ արձակված անձանց) և այլ սոցիալական խմբեր ներկայացնող կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց:
3. Նախատեսվում է աջակցություն ցուցաբերել և խրախուսել հասարակական կազմակերպություններին, կամավորներին համատեղ սոցիալական խնդիրների լուծման, ծրագրերի արդյունավետ իրագործման, բնակիչների իրազեկվածության բարձրացման նկատառումով:
4. Տարեցների համար սոցիալական ծառայությունների մատուցման ծրագրերի իրագործման շրջանակում հոգածություն կդրսևորվի տարեց քաղաքացիների նկատմամբ:

Պետություն - հասարակական կառույցներ - համայնք համագործակցությամբ կշարունակվի տարեցների սոցիալական սպասարկման, աջակցությանն ուղղված ծրագրերի իրագործում:

5. Կիրականացվեն տեղահանված քաղաքացիների հասարակական ինտեգրման և սոցիալական օժանդակության ծրագրեր: Կշարունակվի կարիքավոր ընտանիքներին տարաբնույթ սոցիալական աջակցությունների տրամադրումը: Մասնավորապես՝ երեխաներին արտահերթ հիմունքներով հասարակական կյանքին աստիճանական ինտեգրումը և այլն:

6. Նախատեսվում է սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով հաշվառման իրականացում, անօթևան անձանց ժամանակավոր կացարանում տեղավորում:

7. Համայնքի աշխատունակ բնակիչների համար աշխատեղերի ապահովում՝ տարբեր ոլորտային ուղղվածությամբ հնարավոր գործատուների հետ համագործակցությամբ:

8. Չաշխատող բնակիչների թվի կրճատում:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը սկսում է երեխայի կյանքի առաջին տարիներից, և ընտանիքին զուգահեռ համազոր կարևոր է կրթությունը, խնամքը և զարգացման կերպը, որը երեխան ստանում է մանկապարտեզում: Կարևոր են շենքային պայմանները, որտեղ մանկահասակ երեխաներն անցկացնում են օրվա զգալի մասը:

Նախորդ տարիներին անհատ բարերարների, պետական համաֆինանսավորման, քույր քաղաքների հետ համագործակցությունների արդյունքում զգալի աշխատանքներ են կատարվել բոլոր մանկապարտեզնում, որոշ մանկապարտեզներ հիմնանորգվել կամ վերանորոգվել են, որոշներում աշխատանքներ կատարվել են հատվածային: Երեխաների՝ մանկապարտեզի հերթագրման գործընթացն առավել դյուրին և թափանցիկ կազմակերպելու համար ներդրվել է էլեկտրոնային հերթագրման հարթակը, որի միջոցով կարելի է ներկայացնել դիմում և հետևել դիմումի ընթացքին:

Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ գործում է թվով 9 մանկապարտեզ ՀՈԱԿ՝ համապատասխանաբար՝ Էջմիածնում գործում է 8 մանկապարտեզ, Ոսկեհատում՝ 1:

Մանկապարտեզ հաճախող երեխաների թիվը կազմում է միջինում 1200: Ներառական կրթություն է իրականացվում է բոլոր մանկապարտեզներում:

Հիմնախնդիրներ

1. Նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային և բակային պայմանների վերջնական բարելավման անհրաժեշտություն:

2. Կրթական հաստատությունների մատչելիության ապահովման անհրաժեշտություն:

3. Ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզների շենքային պայմանների համապատասխանեցում սովորողների ֆիզիկական կարիքներին:

2022-2026թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Որակյալ կրթության և դաստիարակության ապահովման նպատակով նախատեսվում է ժամանակակից պահանջներին համապատասխան բարելավել նախադպրոցական հաստատությունների շենքային և բակային պայմանները՝ երեխաների համար ստեղծել առավել ապահով, անվտանգ և հարմարավետ միջավայր, խաղահրապարակներ և կանաչապատ տարածքներ:

2. Նախատեսվում է նախադպրոցական հաստատություններում յուրաքանչյուր երեխայի զարգացման, ունակությունների դրսևորման համար, հավասար պայմանների ապահովում:

3. Նախատեսվում են ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ կրթության որակի բարձրացմանն ուղղված աշխատանքներ: Սովորողների հետաքրքրությունը, կարողությունները և հմտությունները զարգացնելու համար կարևոր է դասապրոցեսում տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային կիրառման ապահովումը:

4. Մանկավարժների մասնագիտական կարողությունների զարգացման նպատակով նախատեսվում է համագործակցության, փորձի փոխանակման ծրագրերի իրականացում: Կկազմակերպվեն հանդիպումներ կրթության ոլորտի զարգացման խնդիրներով զբաղվող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Փորձի փոխանակման նպատակով շարունակվելու են ուսուցիչների և մանկապարտեզների դաստիարակների փոխայցելություններ Էջմիածնի քույր քաղաքների կրթական հաստատություններ, իրականացնելով նաև սաների և դաստիարակների ճանաչողական փոխայցելություններ:

ՄՇԱԿՈՒՅԹ

Տարեցտարի մշակութային կյանքը Վաղարշապատում ծաղկում և բազմոլորտ է դառնում, այստեղ կազմակերպվում են հանրապետական մրցույթներ, փառատոններ, համայնքապետարանի ենթակայությամբ գործող արտադպրոցական ուսումնական հաստատություններում դասապրոցեսը կազմակերպվում է առավել հագեցած և այլընտրանքային:

Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ գործում են 2 երաժշտական և արվեստի ու 1 կերպարվեստի դպրոց, 1 գրադարան, 2 թանգարան:

Համայնքային ենթակայության արտադպրոցական հաստատությունները համայնքապետարանի մշտական հոգածության ներքո են: Մակար Եկմալյանի անվան թիվ 1 և Սպիրիդոն Մելիքյանի անվան թիվ 2 երաժշտական դպրոցներ են հաճախում ընդհանուր թվով 543 սան, որից 63-ը օգտվում են վարձավճարի մասնակի կամ ամբողջական արտոնությունից:

Եղիշե Թադևոսյանի անվան գեղարվեստի դպրոց է հաճախում 239 սան: Վարձավճարի արտոնությունից է օգտվում 59 երեխա՝ մասնակի կամ ամբողջական:

Համայնքապետարանի ենթակայությամբ գործող արտադպրոցական հաստատությունների սաներն ներգրավվում են համաքաղաքային բոլոր միջոցառումներին՝ հնարավորություն ունենալով ելույթներով և աշխատանքներով հանդես գալու հասարակության լայն շերտերի առաջ, ներկայացնել իրենց կատարած աշխատանքները, ի ցույց դնել ստացած գիտելիքներն ու հմտությունները: Մեր սաները փայլուն ներկայանում են տարբեր մրցույթ-փառատոներում՝ պատվով և արժանապատվությամբ ներկայացելով մեր համայնքը Հանրապետության տարբեր մարզերում և Հայաստանի սահմաններից դուրս:

Անցնող տարիներին Կոմիտասի անվան մշակույթի պալատում են հյուրընկալվել հանրապետության լավագույն թատրոնները՝ իրենց խաղացանկերի լավագույն ներկայացումներով, անցկացվել են հանրապետական նշանակության փառատոներ, մրցույթներ, համերգային ծրագրեր: Մշակույթի պալատի նախասրահում կազմակերպվել են ցուցահանդեսներ: Այստեղ գործող երգի և պարի խմբերը մասնակցել են անվանի մրցույթ-փառատոների:

Մշակույթի ոլորտի գլխավոր դերակատարներից են համայնքում գործող թանգարանները, որոնցից երկուսը՝ Վաղարշապատի պատմազգագրական թանգարանը և Հովհաննես Հովհաննիսյանի տուն-թանգարանը պարբերաբար համալրվում են նոր ցուցանմուշներով, կազմակերպում են տարաբնույթ միջոցառումներ: Երկու թանգարանները գործում են անվճար:

Համայնքի մշակույթային կյանքում բեկումնային էեղել «Փոքրիկ քայլ» երաժիշտ-կատարողների մրցույթ փառատոնի հիմնումը:

Սկսած 2019 թվականից «Ատպրոգրես» մշակութային հասարակական կազմակերպության հետ համատեղ իրականացվող «Փոքրիկ քայլ» հանրապետական փառատոնին 2022 թվականին մասնակցել են 1800-ից ավելի պատանիներ և երիտասարդներ ՀՀ բոլոր մարզերից և Արցախից: Փառատոնի հիմնական նպատակն է բացահայտել երաժշտական տաղանդով օժտված պատանիներին և երիտասարդներին, փոքրիկ քայլերով ճանապարհ հարթել դեպի երաժշտության մեծ աշխարհ: Մրցույթի կազմակերպչական աշխատանքների բարձր մակարդակը թույլ է տալիս հետագա տարիներին այն դարձնել միջազգային՝ ժյուրիի անդամների կազմում միջազգային բարձր մակարդակի երաժիշտներ ներգրավելով, հնարավորություն տալով այլ երկրների շնորհաշատ պատանիների մասնակցել մրցույթին:

Մրցույթի աշխատանքները միայն այսքանով չեն սահմանափակվում: Ամբողջ տարվա ընթացքում մասնակցած և բարձր տեղեր գրաված պատանիները հյուրընկալվում են տարբեր հաստատություններում, մասնակցում են վարպետաց դասերի, երեկույթների, համերգների: Մրցույթը բացառիկ հնարավորութուն է ստեղծում տարբեր մարզերի հասակակից պատանիներին և երիտասարդներին շփվելու, հաղորդակցվելու միմյանց հետ:

Ըստ ուղենշած ծրագրի՝ 2022 թվականին հոկտեմբերին՝ Էջմիածնում՝ քաղաքի 2707-ամյակի միջոցառումների շրջանակում նախապատրաստվել և կազմակերպվել է նկարիչների միջազգային սիմպոզիում, որին մասնակցել են անվանի արվեստագետներ և նկարիչներ Էջմիածնից և արտերկրից: Սիմպոզիումի շրջանակում Հայատանում հյուրընկալված այլազգի արվեստագետները ոչ միայն ստեղծել են կտավներ, այլև հնարավորություն են ունեցել բացահայտել Էջմիածինը և Հայաստանի այլ տեսարժան վայրերը: Հետագա տարիների համար գլխավոր նպատակ է ներգրավել Էջմիածնի քույր քաղաքերից /և ոչ միայն/ արվեստագետների, ինչի շնորհիվ կստեղծվեն նաև նոր մշակութային կապեր: Առաջիկա տարիներին, կստեղծվի նաև պատկերասրահ, որտեղ կգույքագրվեն և կցուցադրվեն սիպոզիումի շրջանակում ստեղծված աշխատանքները:

Էջմիածնի մշակութային այցեքարտերից է դարձել «Քուֆթայի» փառատոնը, որը առաջին անգամ անցկացվել է 2019 թվականին՝ քաղաքի 2704-այմակի տոնական միջոցառումների շրջանակում: Քուֆթան ավանդաբար հայտնի է որպես Էջմիածնի խորհրդանիշ ուտեստ, և փառատոնի հիմնումը նոր գույն հաղորդեց տոնի խորհրդին՝ ընդգրկել հանրապետության ողջ տարածքից այստեղ ժամանած մասնակիցների և հյուրերի: Հետագա տարիներին քայլեր կձեռնարկվեն փառատոնը քաղաքի այլընտրանքային դիմագծի կարևոր մաս դարձնելու ուղղությամբ:

Մշակույթի զարգացման նոր մղիչ ուժ կդառնա Հ. Հովհաննիսյանի անվան գրադարանի նոր շենքի հիմնումը: Ըստ պլանավորված կառուցապատման երկամյա աշխատանքների, 2024-ին Էջմիածնում կգործի հանրապետության լավագույնների թվին դասվող, եռահարկ, նոր որակական լուծումներով գրադարան:

Ներկայիս գրադարանային հավաքածուն 31.12.2021թ. դրությամբ 279875 միավոր է: Ընթերցողների քանակը՝ 3728, ընթերցողական հաճախումների քանակը՝ 28293, գրքատացքը՝ 63758 միավոր:

Գրադարանի արդիականացման և ընթերցողին մոտեցնելու կարևոր քայլ և մեծ ներդրում է էլեկտրոնային գրադարանի ստեղծումը, որտեղ հաշվառվում են գրադարանում առկա գրքերը:

Գրադարանում շարունակվում են ակտիվ աշխատանքները գրքային ֆոնդերի ստուգման, քարտարանների և գույքամատյանների հետ համեմատականների անցկացման ուղղությամբ: Ընթացքի մեջ են փաստացի առկա գրքային միավորների վերահաշվառման, վերագույքագրման աշխատանքները: Զուգահեռաբար առանձնացվում և ցուցակագրվում են զտման ենթակա և անդառնալիորեն վնսված գրականության միավորները: Վերագրանցված գրականությունը ներկայիս պահանջներին համապատասխան վերագնահատելու և ֆինանսական ամրագրում են ստանալու: Շարունակվում են աշխատանքները նաև Գրադարանային-մատենագիտական դասակարգման /ԳՄԴ/ համակարգի փոխակերպման ուղղությամբ:

Հիմնախնդիրներ

1. Արվեստի և երաժշտական դպրոցներում ներգրավվածության ու հասանելիության խթանման անհրաժեշտություն:
2. Տեղական ու միջազգային փառատոնների կազմակերպմանն ուղղված աշխատանքների որակական աճի և ակտիվացման անհրաժեշտություն:
3. Երաժշտական և արվեստի դպրոցները անհրաժեշտ գույքով և երաժշտական գործիքներով ապահովելու անհրաժեշտություն:
4. Երիտասարդ ստեղծագործողների համար նոր մշակութային կենտրոնների ստեղծման անհրաժեշտություն:
5. Թանգարանային նմուշների ամրակայում, վերականգնում, ֆոնդապահոցներում և ցուցադրությունում թանգարանային առարկայի անվտանգ և անհրաժեշտ պայմանների ապահովման անհրաժեշտություն:
6. Երաժշտական և կերպարվեստի դպրոցների շենքային պայմանների բարելավվում:
7. Թանգարաններում ֆոնդապահոցների ջերմախոնավային համակարգի ստեղծման և առկա համակարգերի բարելավման և վերազինման անհրաժեշտություն:
8. Վերականգման արվեստանոցների՝ նյութերով և տեխնիկայով վերազինման անհրաժեշտություն:
9. Մշակութային ծրագրերին բնակչության ինտեգրման անհրաժեշտություն:
10. Միջազգային մրցույթների կազմակերպան համար մասնագետների անհրաժետ վերապատրաստման իրականացում, փորձի փոխանակում:
11. Մեծամասշտաբ ցուցադրությունների համար նախատեսված վայրի բացակայություն:

2022-2026թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է ընդգրկուն ծրագրերի ներդրման միջոցով արվեստի և երաժշտական դպրոցներում խթանել հասանելիությունն ու ներգրավվածությունը:
2. Նախատեսվում է տարաբնույթ մշակութային միջոցառումների կազմակերպում, համայնքում պետական, ազգային և այլ միջոցառումների կազմակերպում և անցկացում:
3. Ծրագրով նախատեսվում է խթանել փառատոնային մշակույթը՝տեղական արտադրողների ու ստեղծագործողների համար:
4. Նախատեսվում է գրադարանային գույքի և շենքային պայմանների բարելավում: Գրադարանում տեխնիկական-տեղեկատվական բազայի վերազինում և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում:

5. Նախատեսվում է ստեղծել մշակութային կենտրոններ, որտեղ երիտասարդ ստեղծագործողները հնարավորություն կունենան մատչելի պայմաններով վարձակալել արվեստանոցներ և կազմակերպել ցուցահանդեսներ, համերգներ և այլ միջոցառումներ:

6. «Արտադպրոցական դաստիարակության» ծրագրի իրականացման նպատակով նախատեսվում է երաժշտական և արվեստի դպրոցներում դպրոցահասակ երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական դաստիարակության, երաժշտարվեստի և արվեստների ուսուցման իրականացում:

7. Նախատեսվում է համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում: Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության միջոցով երեխաների, պատանիների և մեծահասակների համար ազատ ժամանցի կազմակերպում, նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ապահովում:

8. Երաժշտական և արվեստի դպրոցների աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով նախատեսվում է անհրաժեշտ գույքով՝ երաժշտական գործիքներով և համապատասխան գույքով ապահովում:

9. Նախատեսվում է ժամանակակից և միջին սերնդի արվեստի գործերի ցուցադրություն, գիտական, կրթական գործունեության իրականացում, Վաղարշապատի պատմությունը, կենցաղն ու մշակույթը ներկայացնող թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրում, թանգարանային ֆոնդի համալրում՝ գնման, հնագիտական պեղումների, նվիրատվությունների հաշվին, ինչպես նաև թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կազմակերպվում են նոր ցուցադրություններ:

10. Նախատեսվում է ցուցասրահ/պատկերասրահի ստեղծում՝ որպես համայնքի ժամանակակից արվեստի գործերի պահպանման և ցուցադրման պահոց:

ՍՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Վաղարշապատում գործում է համայնքային ենթակայության 1 մարզադպրոց՝ 4 մասնաճյուղով: Վաղարշապատի համայնքապետարանի մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ-ում գործում է 14 մարզաձև: Դրանք են՝ Հունա-հռոմեական ըմբշամարտ, Ազատ ոճի ըմբշամարտ, Բռնցքամարտ, Ընդհանուր մենամարտեր, Ջյուդո, Սպորտային մարմնամարզություն, Աթլետիկա, Վոլեյբոլ, Բասկետբոլ, Ծանրամարտ, ՈՒժային եռամարտ, Ֆուտբոլ, Շախմատ և Լող: Ձևավորված են 50 մարզախմբեր:

Մարզադպրոցի մարզիկների հետ աշխատում են շուրջ 25 մարզիչ-մանկավարժներ՝ այդ թվում հանրապետության Վաստակավոր մարզիչներ և Սպորտի վարպետներ: Համայնքապետարանը կարևորում է ինչպես հաջողությունները մեծ սպորտում, որ նպաստում է մեր համայնքի, մեր պետության համբավի բարձրացմանը, այնպես էլ ֆիզկուլտուրան, մանկապատանեկան սպորտը, որ նպաստում է առողջ սերունդ մեծացնելուն: Այս նպատակով անցկացվել են մի շարք մասսայական միջոցառումներ, որոնցից հիշատակման են արժանի՝ Հունահռոմեական ըմբշամարտի բաց առաջնությունը նվիրված Հայոց բանակի կազմավորման օրվան, « Սպորտլանդիա 2021»-ը, Էջմիածին քաղաքի դպրոցական աղջիկների և տղաների վոլեյբոլի առաջնությունը, Լողի բաց դասեր և ներքին առաջնությունը, Սպորտային մարմնամարզության փակ առաջնությունը, Վաղարշապատ քաղաքի վոլեյբոլի դպրոցական աղջիկների և տղաների առաջնությունը, Շախմատի 4-րդ և 3-րդ կարգի որակավորման մրցաշարը:

Սպորտային կյանքի և առողջ ապրելակերպի համար նախորդող տարիներին սկիզբ է դրվել համայնքում մարզական հրապարակներ կառուցելու նախագծին և արդեն իսկ գործում է 3 մարզական խաղահրապարակ՝ Զվարթնոց, Սասունցի Դավիթ և Չարենց թաղամասերում: Ծայրամասերից սկիզբ առած նախաձեռնությունը կընդլայնվի հետագա տարիներին ևս՝ նպաստելով համայնքի համաչափ զարգացմանը, սպորտի խրախուսմանը, առողջ ապրելակերպի խթանմանը:

Մարզական խաղահրապարակների հիմնումը մասնավոր հատվածի և հասարակական կազմակերպությունների հետ հաջող համագործակցության լավագույն օրինակներից է համայնքապետարանի գործունեության, քանի որ բոլոր մազական հրապարակները ստեղծվել են համայնքապետարանի և անհատ բարերարներ, ձեռներեցների կամ հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ:

Առողջ ապրելակերպի և սպորտային կյանքի խթանմանն ու մասսայականացմանն ուղղված մեր ծրագիրը խթանելով, շարունակելու ենք ստեղծել ուղիներ համայնքում նմանօրինակ հարթակներ

ստեղծելու, որպեսզի մեր բնակիչները հնարավորություն ունենան մարզվելու ու կոփվելու: Կստեղծվեն մինի ֆուտբոլի դաշտեր, կբարեկարգվեն տարբեր թաղամասերում արդեն իսկ գործող առանձնացված հատվածները, որոնք նախատեսված են որպես ֆուտբոլի դաշտեր:

Հիմնախնդիրներ

1. Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի զարգացման, մասսայականացման, բնակության և հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար համապատասխան պայմանների ստեղծման, առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորման անհրաժեշտություն:
2. Ազգաբնակչության լայն զանգվածների համար մարզական ակումբներից, մարզաբազաներից օգտվելու մատչելիության ապահովում՝ մասնավորապես լողավազաններն ու մարզադահլիճները:
3. Պետական, համայնքային, հասարակական ու մասնավոր մարզական կազմակերպությունների փոխգործակցության արդյունավետության բարձրացման անհրաժեշտություն:
4. Տարածաշրջանային և միջազգային մարզական շարժումների հետ համագործակցության հաստատման և ընդլայնման անհրաժեշտություն:
5. Հաշմանդամություն ունեցող մանուկների և պատանիների համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծման անհրաժեշտություն:
6. Սպորտային հրապարակների համար նախատեսված տարածքների սակավություն:

2022-2026թթ. նախատեսվող ծրագրեր

1. Նախատեսվում է բարելավել «Վաղարշապատի մանկապանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի մասնաճյուղերի շենքային պայմանները, համալրել նոր գույքով:
2. Նախատեվում է տարաբնույթ սպորտային միջոցառումների կազմակերպում: Ծրագրով նախատեսվում է՝ Վաղարշապատ համայնքի հանրային, մարզական միջոցառումների տարեկան պլանով նախատեսված առաջնությունների, միջոցառումների կազմակերպում, Հայաստանի Հանրապետության առաջնություններում ու տեղական և միջազգային մրցաշարերում մարզադպրոցի մարզիկ-մարզուհիների մասնակցության ապահովում, Վաղարշապատի թիմերի, նաև համայնքի բնակիչ մարզիկների համար ուսումնամարզական հավաքների կազմակերպում՝ հանրապետական և միջազգային մրցաշարերին նախապատրաստվելու և պատշաճ մակարդակով մասնակցելու նպատակով:
3. Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց հնարավոր ներգրավվում սպորտային կյանքին, վերջիններիս համար մարզական միջոցառումների, սպարտակիադաների, փառատոների, ստեղծագործական ցուցահանդեսների կազմակերպում:
4. Նախատեսվում է մարզական հրապարկներով համալրել համայնքի այն թաղամասերը, այգիներն ու բակերը, որտեղ դեռևս բացակայում է մարզական գույքը:
5. Նախատեսվում է նոր բազմակի շահագործման սպորտային դաշտերի կառուցում տարբեր թաղամասերում: Արդեն եղած դաշտերի բարեկարգում:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երիտասարդությունը յուրաքանչյուր համայքի, հասարակության և պետության ապագայի հայելին է, հենասյունը: Լայնախոհ երիտասարդությունն ապահովում է համայնքի կենսագործման ավյունը, զարգացնում իր համայնքը: Վաղարշապատ համայքում երիտասարդական 2 հզոր կառույց է գործում՝ Վաղարշապատի երտասարդական միությունը, և «Էջմիածնի երիտասարդների տուն»-ը: Վերջինս՝ պաշտոնավարմանը հաջորդող տարվա արտաքին հարաբերությունների զարգացման և հաջող գործակցության լավագույն օրինակներից է, և համայնքի զարգացման 2022-2026 թվականների ծրագրի արդեն իսկ իրողություն դարձած անկյունաքարերից մեկը:

2022 թվականի մարտ ամսին, Վաղարշապատի համայնքապետարանի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ), Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի միջև ստորագրվեց եռակողմ փոխըմբռնման հուշագիր, որի համաձայն 2022 թվականի օգոստոսին գործունեությունը մեկնարկեց «Էջմիածնի երիտասարդների տուն» կենտրոնը: Երիտասարդական կենտրոնի ստեղծման նպատակն է բարձրացնել համայնքի երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը, նպաստել նրանց ներգրավվածությանը համայնքի կյանքում: Ծրագիրն իր մեջ ներառում է Վաղարշապատ համայնքում 13-18 տարեկան պատանիներին և երիտասարդներին երիտասարդական աշխատանքի անվճար ծառայությունների տրամադրմանը՝ կյանքի հմտությունների և աշխատանքային

մրցունակության միտված հմտությունների ուսուցում, անհատական և խմբային խորհրդատվություն, ոչ-ֆորմալ կրթություն, թեմատիկ քննարկումներ, սեմինարներ և այլն: Կենտրոնի գործունեության ֆինանսավորումը մինչ այս և ապագա հինգ տարիներին ևս կկատարվի Վաղարշապատի համայնքապետարանի կողմից:

Իսկ 18 տարեկանից բարձր երիտասարդները ներգրավվում են Վաղարշապատի երիտասարդական միությանը, մասնակցում համաքաղաքային և հանրապետական տարաբնույթ միջոցառումների, փորձի փոխանակումներ ունենում տարբեր երիտասարդական կառույցների հետ: Ոլորտի մասնագետների հետ պարբերական հանդիպումների շնորհիվ ունենում այլընտրանքային կրթության հնարավորություն:

Հիմնախնդիրներ

1. Համայնքի երիտասարդների սոցիալ-տնտեսական գործունեության, զբաղվածության ապահովմանն ուղղված միջոցառումների անցկացման անհրաժեշտություն:
2. Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խրախուսման անհրաժեշտություն:
3. Համայնքի սահմաններում երիտասարդների ժամանցի և զարգացման համար նախատեսված կառույցների թվի սակավությունը:

2022-2026թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է իրականացնել համատեղ միջոցառումներ երիտասարդության մասնակցությամբ:
2. Նախատեսվում է ընդլայնել միջազգային կազմակերպությունների և դեսպանությունների հետ աշխատանքների շրջանակը:
3. Արդյունավետ համագործակցություն կիրականացվի երիտասարդական հասարակական կազմակերպությունների, սփյուռքի և հանրապետության մարզերի երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային երիտասարդական կառույցների հետ:
4. Նոր շահառու կողմերի ներգրավում՝ երիտասարների դերը համայնքի այլընտրանքային կառավարման գործում մեծացնելու համար:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Համայն հայության հոգևոր մայրաքաղաք Էջմիածինը Հայաստանի և հայության համար առանցքային բնակավայրերից է, աշխարհի քրիստոնյա բնակչության կարևորագույն այցելավայրերից մեկը: Էջմիածինը, որպես համայն հայության հոգևոր մայրաքաղաք, մշակութային և հոգևոր զարկերակ, իր մեջ ներառում է հանրապետության հնագույն ուսումնական, մշակութային կենտրոններ, թանգարաններ, պատմամշակութային կոթողներ:

Էջմիածինը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային ոլորտում անփոխարինելի դեր և նշանակություն ունի. այն ոչ միայն բազային զբոսաշրջային կենտրոն է հանդիսանում, այլև պետության հիմնական մշակութային և զբոսաշրջային կենտրոն է: Զբոսաշրջային ծառայությունների արագ աճող պահանջարկը վերջին տարիներին հանգեցրեց հյուրանոցների թվի եւ սպասարկման ոլորտի որակական աճին: Այսօր Էջմիածնում գործում են հյուրանոցներ, հյուրատներ, սննդի կետեր, որոնք գրավիչ են զբոսաշրջիկի համար, այլընտրանք՝ մայրաքաղաք Երևանից դուրս, բայց առավել հարմար աշխարհագրական դիրքում հյուրընկալվելու համար: Սա է գլխավոր գործոններից մեկը, որ հետհամավարակային և հետպատերազմական իրակավիճակում տարեցտարի զբոսաշրջության ծավալն ավելանում է:

2023 թվականին նախատեսված է Մայր Տաճարի շինարարական աշխատանքների ավարտը և Տաճարի վերաբացումը, ինչը ևս մեծապես կնպաստի զբոսաշրջային նոր հոսքին: Կառուցվելիք եռահարկ վայելչագեղ գրադարանի նոր մասնաշենքն իր հերթին կդառնա ներգնա տուրիզմի զարգացման գործոն ևս:

Համայքապետարանի պաշտոնական կայքում (www.ejmiatsin.am) առանձնացված է «Զբոսաշրջիկի անկյուն» բաժինը, որտեղ ներկայացված են «Պատմություն», «Խորհրդանիշեր», «Եկեղեցիներ», «Թանգարաններ» և «Հուշարձաններ» բաժինները: Կայքը զբոսաշրջիկին հնարավորություն է տալիս երկլեզու (հայերեն և անգլերեն) ծանոթանալ Էջմիածնի պատմությանը, ուսումնասիրել քաղաքի խորհրդանիշները, ստանալ տեղեկատվություն քաղաքի եկեղեցիների, թանգարանների, հուշարձանների և դրանց գտնվելու վայրերի մասին:

Հիմնախնդիրներ

1. Վաղարշապատի զբոսաշրջային բրենդի բացակայություն:
2. Զբոսայգիների վերականգնման անհրաժեշտություն՝ մասնավոր ներդրումների միջոցով:
3. Հանրային զուգարանների հիմնախնդրի լուծման անհրաժեշտություն:
4. Զբոսաշրջային ենթակառուցվածքների և հետաքրքրություն ներկայացնող վայրերի ոչ բավարար հագեցվածություն՝ այլազգի զբոսաշրջիկների պահանջներին համապատասխան:
5. Զբոսաշրջիկներին անհրաժեշտ տեղեկատվության ոչ բավարար մակարդակ:
6. Հոգևոր զբոսաշրջությունից զատ, Վաղարշապատ համայնքի այլ դիտարժան վայրերի քարտեզագրում, զբոսաշրջային ուղեգծի կազմում:
7. Կենտրոնական փողոցների շենքերի արտաքին հատվածի անհրապուրություն, զբոսաշրջիկների համար գրավչություն ներկայացնող այլընտրանքային վայրերի բացակայություն:

2022-2026թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է մշակել Վաղարշապատ համայնքի զբոսաշրջային բրենդը: Ընդ որում նախատեսվում է աշխատանքները իրականացնել հանրային բաց քննարկումների միջոցով:
2. Նախատեսվում է մշակել և ներդնել զբոսաշրջային թեմատիկ ծրագրեր՝ Էջմիածնի համակողմանի ճանաչման համար:
3. Կարևորելով Էջմիածնի դերը՝ մեծ ուշադրություն է դարձվում քաղաքի հանրահռչակմանն ուղղված աշխատանքներին միջազգային հարթակներում: Փողոցներում սոցիալական գովազդի պատրաստումն ու տեղադրումը, ուղղորդիչ ցուցանակների տեղադրման կազմակերպումը:
4. Էջմիածնի քույր քաղաքների, համայնքում գործող զբոսաշրջային ընկերությունների հետ համագործակցության ուղիների և ռազմավարության մշակում: Համայնքում գործող՝ նաև զբոսաշրջիկների սպասարկման ոլորտում ծառայություններ մատուցող ընկերությունների հետ համագործակցության շարունակական բարելավում:
5. Նախատեսվում է զարգացնել քաղաքի տոնի շրջանակում կազմակերպվող Քուֆթայի փառատոնը, «Փոքրիկ քայլ» երաժիշտ պատանիների մրցույթ-փառատոնը, բացօթյա ցուցահանդեսները, թեմատիկ տոնավաճառները, զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող սեզոնային փառատոնները, համերգները: Նախատեսվում է ընդլայնել արվեստագետների միջազգային սիմպոզիումի մասնշատբերն ու աշխարհագրությունը: Նախատեսվում է Էջմիածինը լավագույնս բնութագրող միջոցառումների և փառատոների կազմակերպում:
6. Կիրականացվեն զբոսաշրջիկների տեղեկատվական աջակցության միջոցառումներ: Այս ծրագիրը նախատեսում է Վաղարշապատի վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստում ինչպես հայերեն, այնպես էլ բոլոր այն լեզուներով, որոնք օգտակար կլինեն թիրախային լսարանի համար: Աշխատանքներ կձեռնարկվեն՝ համայնքապետարանի ենթակայության թանգարաններում ներդնել աուդիոգիդի ծառայություն, որը հնարավորություն կընձեռի խթանելու զբոսաշրջիկների թվի ավելացմանը:
7. Նախատեսվում է հանրապետական և միջազգային համագործակցությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ, ինչը ենթադրում է տարաբնույթ միջոցառումների մշակում և կազմակերպում քույր և գործընկեր քաղաքների հետ, հանդիպումների, ճանաչողական այցերի, փորձի փոխանակման կազմակերպում՝ պետական և մասնավոր շահառու կազմակերպությունների մասնակցությամբ:

ԽԵԼԱՑԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Աշխարհում ընթացող տեխնոլոգիական զարգացումներն ու նորարարական լուծումները լայն հնարավորություններ են ստեղծում քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում ավելի արդյունավետ կառավարում ապահովելու և քաղաքային ենթակառուցվածքների զարգացման համար:

Ուսումնասիրությունների շրջանակը ներառում է Վաղարշապատ համայնքի բոլոր ոլորտները, մասնավորապես՝ տեղեկատվական համակարգը, կրթությունը, զբոսաշրջությունը, էլեկտրամատակարարումը, ջրամատակարարումը և այլ ոլորտներ: Վաղարշապատի համայնքապետարանում ներդրվել է դիմումների մուտքագրման, մանկապարտեզների հերթագրման միասնական համակարգ, որի շնորհիվ առաջին քայլերն արվեցին նաև կառավարման այլ ոլորտներում, թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային եղանակին անցնելու համար:

2019 թ. ապրիլի 12-ին Էջմիածնի և Իսի լե Մուլինոյի միջև բարեկամության 30-ամյակին նվիրված տոնակատարությունների շրջանակում բարեկամության և համագործակցության պայմանագիրը վերակնքվեց, ստորագրվեց նաև ՛՛Smart Cities՛՛ «Խելացի քաղաքներ»-ի վերաբերյալ համագործակցության

պայմանագիրը: Պայմանագրի նպատակն է մշակել Էջմիածնում խելացի քաղաքի զարգացմանը նպաստող և նորարարական լուծումների ընդունումը խթանող համատեղ ծրագրեր մի շարք ոլորտներում:

Հիմնախնդիրներ

1. Քաղաքային ենթակառուցվածքներում և մատուցվող ծառայությունների գործընթացում էլեկտրոնային համակարգերի և նորագույն տեխնոլոգիաների կիրառության ցածր մակարդակ:
2. Առկա համակարգերի վերաբերյալ բնակիչների տեղեկացվածության և իրազեկման ցածր մակարդակ:
3. «Խելացի քաղաք» տարրերի ինտեգրված համակարգի բացակայություն:

2022-2026թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Շարունակել Վաղարշապատ համայնքի կառավարման՝ տեղեկատվական համակարգի անցումը՝ համայնքապատկան այլ ոլորտներում ևս՝ մատուցվող ծառայությունները համայնքի բնակիչների համար դարձնելով առավել հարմարավետ և հեշտ հասանելի:
2. Քաղաքի առջև ծառացած մարտահրավերների լուծում՝ հիմնված նորարարական մոտեցումների վրա:
3. Քաղաքացիների արդյունավետ մասնակցության ապահովում քաղաքի զարգացման և կառավարման գործընթացներին:
4. Տեղեկացվածության և իրազեկման մակարդակի բարձրացում:
5. Տեխնոլոգիաների ներդրման և կիրառման փորձի փոխանակում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վաղարշապատ համայնքի զարգացման, ներդրումային ծարգրերի իրագործման համար ակտիվ համագործակցային կապեր են ստեղծվել արտասահմանյան 14 քաղաքների հետ: Համայնքապետարանն անդամակից է միջազգային կազմակերպությունների՝ «ԵՄ Համայնքի ղեկավարները հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնություն, ՄԱԿ-ի զարգացման ծրագիր, ԵՄ «Քաղաքապետերի դաշնագիր» ծրագիր, ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Ուսումնառող քաղաքների համաշխարհային ցանց», «Կանաչ ուխտագնացության ցանց», ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային ժառանգության քաղաքներ» կազմակերպություն:
Վերջին տարիներին նոր ուղիներ են հարթվում Հայաստանում հավատարմագրված դեսպանատների, միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունների համար: 2022 թվականին Ճապոնիայի դեսպանատան «Grassroots» դրամաշնորհային ծրագրով վերանորգվել է թիվ 13 «Ծիծեռնակ» մանկապարտեզի մեկ մասնաշենք՝ հնարավորություն տալով մանկապարտեզը հանձնել ամբողջական շահագործման՝ բարեկարգ շենքային պայմաններով: Սա, թերևս, բացառիկ համագործակցություն էր համայնքապետարանի և Հայաստանում հավատարմագրված դեսպանության միջև, որը խթանել է երկկողմ հարաբերությունների առավել սերտացմանն ու արդյունավետության բարձրացմանը՝ հիմք դառնալով հետագա նոր համագործակցությունների:

Հայաստանում հավատարմագրված այլ դեսպանատների հետ հարաբերությունները սերտացնելու ծրագրի օրինակ է եղել 2023 թվականի փետրվարի 19-ին՝ Գրքի տոնին նախորդած համագործակցությունը, երբ համայնքապետարանը դիմել էր շուրջ երկու տասնյակ դեսպանատան՝ գրադարանի գրքային ֆոնդը նշված երկրի գրականությամբ համալրելու խնդրանքով, ինչին ի պատասխան դեսպանատները նվիրաբերեցին գրքեր՝ մայրենի և այլ լեզուներով:

Հիմնախնդիրներ

1. Էջմիածնի և քույր քաղաքների միջև գործնական կապերի ամրապնդման և ակտիվացման անհրաժեշտություն: Այլ քաղաքների հետ նոր կապեր ստեղծելու, հնարավոր ուղղություններն ընդլայնելու անհրաժեշտություն:
2. Միջազգային փորձի ուսումնասիրության և կիրառման անհրաժեշտություն՝ համայնքային կառավարման տարբեր ոլորտներում:
3. Քաղաքում ոլորտային ծրագրերի արդյունավետ իրականացման նպատակով՝ բարձրաստիճան մասնագետների հետ կապի հաստատման և միջազգային մասնագետների ներգրավման անհրաժեշտություն:
4. Առավել մեծ թվով համայնքների, միջազգային կառույցների հետ համագործակցություն:

2022-2026թթ. նախատեսվող աշխատանքներ

1. Նախատեսվում է ակտիվացնել միջազգային համագործակցությունը, քաղաքային կառավարման արդյունավետ միջազգային փորձը տեղայնացնել և ներդնել Վաղարշապատում:

2. Նախատեսվում է ստեղծել Էջմիածնում իրագործվող միջազգային ծրագրերի համակարգման հարթակ: Ծրագրով նախատեսվում է Վաղարշապատի համայնքապետարանի ենթակայությամբ խորհրդի ստեղծում, որը կհամախմբի արդեն իսկ իրագործվող միջազգային ծրագրերը, կհամակարգի և կտրամադրի տեղեկատվություն:

3. Նախատեսվում է համայնքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում: Ծրագրի նպատակն է ներգրավել օտարերկրյա ներդրումներ, ինչպես նաև աջակցել զբոսաշրջության զարգացմանը:

4. Նախատեսվում է համագործակցությունների շրջանակում համայնքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների կարողությունների բարձրացում:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Վաղարշապատ համայնքի հնգամյա զարգացման ծրագրում ներառված հաջորդ հիմնախնդիրը քաղաքացիական բնակչության պաշտպանության, մասնավորապես, թաքստոցներին և ապաստարաններին վերաբերող առկա հիմնախնդիրներն են և դրանց լուծման ճանապարհները: Մասնավորապես՝

1. Համայնքի բնակչության պատսպարումն ապահովելու և պաշտպանական կառույցները պատրաստ վիճակում պահելու նպատակով պետք է պարբերաբար իրականացվեն բնակչության պատսպարման համար նախատեսված պաշտպանական կառույցների ուսումնասիրության աշխատանքներ և միջոցներ ձեռնարկվեն արձանագրված թերությունների վերացման ուղղությամբ:

2. Համայնքում պետք է կազմակերպվի և իրականացվի համայնքի բնակչության ազդարարման համար նախատեսված վերջույթային սարքավորումների (էլեկտրաշչակ և էլեկտրաշչակների կառավարման վահանակ) համայնքի կողմից ձեռքբերման, տեղադրման և կենտրոնացված ազդարարման համակարգին միացման աշխատանքներ:

Ապաստարանների թեման արդիական դարձավ Արցախում մարտական գործողությունների ժամանակ: 44-օրյա պատերազմն ստիպեց, որ մենք ավելի շատ մտահոգվենք պարզագույն թաքստոցների բացակայությամբ: Այսօր հանրապետության գրեթե բոլոր մարզերում թաքստոցների խնդիրը արդիական է: Պաշտպանական կառույցների ստեղծումն հանրապետությունում դարձել է օրախնդիր: Այդ իսկ պատճառով, նախատեսել հստակ քայլերի շարք՝ ուղղված հիմնախնդրի լուծմանը.

1) Իրականացնել գոյություն ունեցող թաքստոցների վերանորոգման աշխատանքներ՝ թաքստոցները բերելով պատշաճ տեսքի:

2) Շենքերում ապաստարան, թաքստոց ունենալը ներառել շինարարական պարտադիր պահանջում: Համայքնում կառուցվող շինությունները, հիմնանորոգվող յուրաքանչյուր դպրոց, մանկապարտեզ, պարտադիր պետք է ունենա չափանիշներին համապատասխան ապաստարաններ:

Թաքստոցներից բացի, կարևոր են նաև տագնապի ազդանշանները: Համայնքի հնգամյա զարգացման ծրագրով նախատսված է նաև էլեկտրական շչակների նորոգում և/կամ համալրում՝ ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության հետ կատարված ստուգուների և ուսումնասիրությունների հիմքով:

ԳԼՈՒԽ 4. ՈՍԿԵՀԱՏ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Ոսկեհատ վարչական շրջանը գտնվում է Էջմիածնից հարավ-արևելք, բնակչությունը կազմում է 2897 մարդ, տարածքը կազմում է 925.99քմ: Ունի 753 առկա տնտեսություն, դպրոց, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակներում մեծ բաժին ունեն վարելահողերը (433 հա), կան պտղատու (3 հա) և խաղողի այգիներ (15 հա): Համայնքային հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր, բազմամյա տնկարկներ՝ կազմելով համապատասխանաբար 111, 17.9, 18.1 հեկտար: Հիմնական զբաղվածություններն են պտղաբուծությունը, խաղողագործությունը, բանջարաբոստանային կուլտուրաների մշակումը, թռչնաբուծությունը, անասնապահությունը: 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն Ոսկեհատ բնակավայրը միավորվեց Էջմիածնին՝ կազմելով Վաղարշապատ խոշորացված համայնքի մաս:

Արդեն 2022 թվականին սկսվել է լուծում տրվել կարևորագույն երկու ենթակառուցվածքների՝ մանկապարտեզի և բուժամբուլատորիայի շենքային պայմանների բարելավմանը, որոնք երկուսն էլ գործում էին վթարային անբարեկարգ պայմաններում:

Նախկին բուժամբուլատորիան բազմաբնակարան վթարային շենքի առաջին հարկում է գործում: Բացակայում են աշխատանքային պայմանները, չկան անցկացված ջրամատակարարման, գազամատակարարման համակարգեր, սանհանգույց: Նոր բուժամբուլատրիան, որի շինաշխատանքների ավարտը պլանավորված է 2023 թվականին, գործում է գյուղապետարանի վարչական շենքի առանձնացված հատվածում, մակերեսը կազմում է շուրջ 180.75քմ: Աշխատանքների ավարտին աշխատասենյակները կկահավորվեն նոր գույքով: Վարչական շրջանի շուրջ 3000 բնակիչ բուժօգնություն կստանա բարվոք պայմաններ ունեցող նոր բուժհաստատությունում:

Ոսկեհատի մանկապարտեզը ևս ամբողջական շահագործման կհանձնվի 2023 թվականին: Վերանորգվում են շենքի հիմնական եւ նկուղային հարկերը, փոխվում են դռները, պատուհանները, ամրակայվում և սալիկապատվում է հատակը, շենքն ապահովում է ջեռուցման և ջրամատակարարման համակարգերով, բակային հատվածն ամբողջությամբ ենթարկվում է բարեկարգման:

Հիմնախնդիրներ

1. Էջմիածնին կապող երթուղու բացակայություն:
2. Կանաչապատ տարածքների ընդլայնման, հանգստյան գոտիների և ջրավազանների ստեղծման, ոռոգման ցանցի արդիականացման անհրաժեշտություն:
3. Վարչական շրջանում խաղահրապարակի և մարզահրապարակի ստեղծման անհրաժեշտություն:
4. Արտաքին լուսավորության ցանցի արդիականացման անհրաժեշտություն:
5. Բնակավայրում աշխատատեղերի ստեղծման համար պարարտ հող ստեղծելու անհրաժեշտություն:
6. Բակային տարածքների ամբողջական բարեկարգման, միջբակային տարածքների ասֆալտապատման և լուսավորման, մինի ֆուտբոլի դաշտերի ավելացման անհրաժեշտություն:

2022-2026թթ. նախատեսվող ծրագրեր.

1. Վարչական շրջանի բնակիչների բարեկեցության մակարդակի բարձրացման նպատակով կիրականացվեն հանգստյան գոտիների, բակային տարածքների, միջբակային տարածքների հետևողական մաքրման և նորգման աշխատանքներ:
2. Բակային տարածքներում և փողոցներում կիրականացվեն ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ:
3. Նախատեսվում է ընդլայնել կանաչ տարածքները, կտնկվեն նոր ծառեր:
4. Վարչական շրջանի կանաչ տարածքների մշտական ոռոգման նպատակով կիրականացվեն ոռոգման ցանցերի նորոգման աշխատանքներ:
5. Սոցիալապես անապահով տարբեր խոցելի խմբերին ուշադրության կենտրոնում մշտապես պահելու նպատակով կկատարվեն տարաբնույթ աշխատանքներ:
6. Հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման համար կստեղծվեն անհրաժեշտ ու բավարար պայմաններ, կկառուցվեն թեքահարթակներ:
7. Կարդիականացվի գիշերային լուսավորության ցանցը:
8. Կստեղծվի Էջմիածնին կապող ներհամայնքային ուղիղ երթուղի: